



ՎԼԱԴԻՄԻՐ
ԽԱՅԱԿՈՎՍԿԻ

891.71
Մ-23

ՄԱՅՍԱԿՈՎՍԿԻՆ ԿԱ ՅԵՎ ՄԵՌԻՄ
Ե ՄԵՐ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱ-
ՆԻ ԼԱՎԱԳՈՒԹՅՆ, ԱՄԵՆԱՑԱՂԱՆ-
ԴԱՎՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԺԸ: ԱՆՏԱՐԲԵ-
ՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊՈՆՐԱ ՀԻՇԱՑԱԿԸ
ՅԵՎ ՆՐԱ ԴՐՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՆՑԱ-
ԴՈՐՆՈՒԹՅՈՒՆ Ե:

Ի. ՍՏԱԼԻՆ

ВЛАДИМИР МАЯКОВСКИЙ

ИЗБРАННОЕ

СТИХИ И ПОЭМЫ

В переводах

*Г. Абова, Г. Боряна, Х. Грачяна,
Н. Зарьяна и Ав. Курбанияна*

*Под редакцией
Р. Григоряна*

Арм. ССР
ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАН

1940

30 SEP 2006

25 NOV 2010

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ

891.71

Ս-23

ւեր

ՀԱՏԸՆՏԻՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 8ԵՎ ՊՈԵՄՆԵՐ

Թարգմանում յամբ

*Գ. Աբովի, Գ. Բորյանի, Ն. Զարյանի,
Խ. Հրաչյանի յեւ Ավ. Դուրբանյանի*

*Խմբագրում յամբ
Հր. Գրիգորյանի*

Հ Խ Ս Հ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1940

24 JUN 2013

12.034


891.71 1900-40

5-23 | ինքնակազմ

հարկեր

(18 անգամ)

n-405 13/11/80



Վ. Վ. ՄԱՅԱԿՈՎՍԿԻ



1900
40

ՅԵՍ ԻՆՔՍ

(ԻՆՔԵՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ)



Թ Ե Մ Ա

Յես պոետ եմ: Դրանով ել հետաքրքրական եմ: Այդ մասին ել գրում եմ: Ուրիշ բաների մասին ես՝ միայն յեթե դա խոսքով պաշտպանված լինի:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Բուրլյուկն ասում եր՝ Մայակովսկու հիշողությունը—վոնց վոր Պոլտավայի ճանապարհը, — ամեն վոք իր կրկնակողին ե թողնում այնտեղ: Սակայն դեմքերն ու տարեթվերը մտքումս չեմ պահում: Հիշում եմ միայն, վրբ 1100 թվին ուր վոր գաղթեցին ինչ վոր «գործացիներ»: Այս դեպքի մանրամասները չեմ հիշում, բայց պետք ե վոր լուրջ գրծ յեղած լիներ: Իսկ մըտքում պահել, թե՝ «սույնը գրված ե մայիսի 2-ին: Պավլովսկ: Շատրվաններ» — միանգամայն մանր բան ե: Ուստի ազատ լուրում եմ իմ ժամանակագրության մեջ:

ԳԼԵԱՎՈՐԸ

Ծնվել եմ հուլիսի 7-ին 1894 թ: (կամ 93—մայրիկիս և հորս ծառայության ցուցակի կարծիքները բաժանվում են: Համենայն դեպս՝ վոչ վաղ): Հայրենիքս ե՝ Բաղդադի դյուղը, Գուլթայիսի նահանգ, Վրաստան:

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ

Հայրս՝ Վլադիմիր Կոնստանտինովիչը (անտառապետ Բաղդադիում) մեռել ե 1906 թ.:

Մայրս՝ Ալեքսանդրա Ալեքսեևնան:

Քույրերս՝ $\left\{ \begin{array}{l} \text{ա) } \text{Լյուդա} \\ \text{բ) } \text{Ուլյա:} \end{array} \right.$

Ուրիշ Մայակովսկիներ ըստ յերևույթին չկան:

1-ԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Նկարչական հասկացողություններ: Տեղն անհայտ է: Զմեռ: Հայրս դուրս եր դրել «Родина» ժուռնալը: «Родина»-ն ունեւր «Հովարիստական» հավելված: Ծիծաղելիներ ժառին խոսում են և սպասում: Հայրս ման է դալիս ու յերգում իր մշտական «ալոն դանֆան դը լա չորս-չորս»-ը: «Родина»-ն յեկավ: Բացում եմ և իսկույն (նկարիկ) բղավում՝ «Ինչ ծիծաղելի յէ: Մի տղամարդ և տղոյս համբուրվում են»: Ծիծաղեցին: Ավելի ուշ, յերբ հավելվածն յեկավ, և պետք եր իրոք ծիծաղել, պարզվեց՝ առաջ միայն ինձ վրա յեն ծիծաղել: Այսպես դատվեցին մեր հասկացողությունները նկարիկների և հումորի մասին:

2-ԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծական հասկացողություններ: Ամառ: Յեկվոր բաղմություն: Գեղեցիկ յերկարահասակ ուսանող Բ. Պ. Գլուշկովսկին: Նկարում է: Կաշեկաղմ մեծ տետր: Փայլուն թուղթ: Թղթի վրա մի յերկար մարդ առանց վարտիկի (զուցե և քիփ մարմնին) հայելու առջև: Մարդուն անվանում են «Յեվդենի-ոնեդին»: Թէ Բորյան եր յերկարահասակ, թէ՛ նկարված մարդը: Պարզ է, Բորյային յես համարում էյի այդ նույն «Յեվդենի-ոնեդինը»: Կարծիքս մնաց յերեք տարի:

3-ԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Գործնական հասկացողություններ: Գիշեր: Պատի յետևում պապայի և մամայի անվերջ քչքչոցը: Դաշնամուրի մասին: Վողջ դիշերը չքնեցի: Ծակում եր միևնույն դարձվածքը: Առավոտը վրա պրծա վաղելով. «պապա, ի՞նչ բան է վճարման տարաժամկետում»: Բացատրությունը շատ դուր յեկավ:

Ամառ: Հյուրերի ցնցող քանակ: Կուտակվում են անվանա-կոչությունները: Հայրս պարծենում է իմ հիշողությամբ: Բո-լոր անվանակոչությունների համար ինձ ստիպում են վոտանա-վորներ անդիր անել: Հիշում եմ՝ հատկապես հորս անվանակո-չության համար—

Как-то раз перед толпою

Соплеменных гор...

«Соплеменных» և «скалы» ինձ դայրացում էյին: Թէ ովքեր էյին դրանք, յես չգիտեյի, իսկ կյանքով դրանք չէյին կամե-նում ինձ հանդիպել: Հետագայում յես իմացա, վոր դա բա-նաստեղծականություն է, և կամացուկ սկսեցի ատել այդ բանը:

ՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Առաջին տունը, մոր պարզորոշ հիշում եմ: Յերկու հարկ: Վերինը՝ մերն է: Ներքինը՝ գինու փոքրիկ դործարան: Տարե-նը մի անգամ— խաղողի լի սայլեր: Ճմլում էյին: Յես ուտում էյի: Նրանք խմում էյին: Այդ ամբողջը — Բաղդադի մոտ գտնվող վրացական հնադույն բերդի տերիտորիան եր: Բերդը քառանկյունանում է բերդապարսպով: Պարսպի անկյուննե-րում— պատվանդաններ թնդանոթի համար: Պարիսպների վրա՝ մարտիոցներ: Պարիսպներից դենը՝ խրամատներ: Խրամատներից այն կողմ անտառներ ու շնագայլեր: Անտառների վերևը՝ լեռ-ներ: Մեծացած: Վաղում էյի ամենաբարձրի վրա: Լեռներն իջ-նում են դեպի հյուսիսակողմ: Հյուսիսում շղթան քակվում է: Յերազում էյի— դա Ռուսաստանն է: Անասելի քաշում եր այն կողմը:

ԱՆՍՈՎՈՐԸ

Յոթ տարեկան եմ: Հայրս սկսեց ինձ տանել ձիով՝ անտա-ռային շրջագայությունների ժամանակ: Լեռնանց: Գիշեր: Վրա յե հասել մշուշը: Նույնիսկ հորս չեմ տեսնում: Արահետը շատ նեղլիկ է: Հայրս, յերևի թեքով քաշեց մասրենու ճյուղը:

Ճյուղը թափով կտալ իմ թշերին: Փոքր ինչ ճշալով, հանում եմ փշերը: Մեկեն չքացավ թե մշուշը, թե ցավը: Տեղի տվող մշուշում մեր վտարերի տակ — յերկնքից պայծառ է: Դա ելեկտրականութունն է: Իշխան Նակաչիձեյի տակառագործաբանը: Ելեկտրականութունից հետո բոլորովին թողի բնությամբ հետաքրքրվելը: Կատարելագործված բան չէ:

ՈՒՍՈՒՄ

Սովորեցնում եր մայրս և ամեն տեսակի քույրերս: Թվաբանութունը թվում եր անճամարտանման: Պետք է հաշիվ անել տղաներին բաժանելիք խնձորներն ու տանձերը: Իսկ ինձ չարունակ տվել են, և յես շարունակ տալիս էյի առանց հաշվի: Կովկասում մրդեր — ինչքան ուզես: Կարգալ պովորեցի սիրով:

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԲԸ

Ինչ վոր «Թռչնավաճառ Ադաֆիա»: Թե վոր այն ժամանակ մի քանի այդպիսի գիրք ընկներ ձեռքս — կարգալը կթողնեյի խալառ: Բարեբախտաբար, յերկրորդը՝ «Դոն Բիշոտն» եր: Այ թե գիրք է: Շինեցի փայտե սուր ու զրահ և հարվածում էյի յուրջս:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Տեղափոխվեցինք: Բաղդադից Քութայիսի: Քննութուն դիմնադիա մտնելու: Բռնեցի: Հարցրին խարսխի մասին (իմ թեքի վրա) — լավ գիտեյի: Բայց տերտերն հարցրեց՝ ինչ բան է «OKO»: Յես պատասխանեցի՝ «Յերեք ֆունտ» (այդպես է վրացերեն): Սիրալիր քննողներս բացատրեցին ինձ, թե «OKO» կնշանակե «աչք», հին յեկեղեցա-սլավոնական լեզվով: Այդ պատճառով քիչ մնաց, վոր կտրվեյի: Դրա համար միանգամից ատեցի բոլոր հինը, բոլոր յեկեղեցականն ու բոլոր սլավոնականը: Հնարավոր է, վոր այստեղից է առաջ յեկել և իմ ֆուտուրիզմը, և իմ աթերիզմը, և իմ ինտերնացիոնալիզմը:

ԳԻՄՆԱԶԻՍ

Նախապատրաստական, 1-ին և 2-րդ: Հառաջադիմությամբ առաջինն եմ: Ամբողջը հինգեր են: Կարգում եմ Ժյուլ-Վեռն:

Առհասարակ ֆանտաստիկ բաներ: Ինչ վոր մեծամորուք մարդ սկսեց նկարչական ընդունակութուններ դրսևորել իմ մեջ: Սովորեցնում է ձրի:

ՀԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Տանն ավելացավ լրագրերի և ժուռնալների թիվը: «Русские ведомости», «Русское слово», «Русское богатство», և այլն: Կարգում եմ բոլորը: Անգլիտակից կերպով լարված եմ: Հիացնում եմ բացիկները՝ հաճանավեր նկարած: Մեծացնում եմ և արտանկարում: Հանդես յեկավ «պրոկլամացիա» բառը: Պրոկլամացիաները կախում են վրացիները: Վրացիներին կախում են կողակները, ընկերներս վրացի էյին: Յես սկսեցի ատել կողակներին:

ԱՆԼԵԳԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մոսկվայից յեկավ քույրս: Վոդևորված: Թագուն տվեց ինձ յերկար թղթիկներ: Դուր եր գալիս, շատ ըխկով բան եր: Հիմա էլ հիշում եմ: Առաջինը՝

Ուշքի յեկ, ընկեր, ուշքի յեկ, յեղբայր,

Շուտ արա ձգիր հրացանդ, վար:

և ելի ինչ վոր մի ուրիշը, վոր վերջանում եր՝

«... թե չե՝ կգնաս գերմանացոց մոտ —

կնոջդ, վորդուդ և մայրիկդ հետ»:

(Թագավորի մասին)

Դա հեղափոխութուն եր: Դրանք վոտանավորներ էյին: Վոտանավորն ու հեղափոխութունը ինչ վոր միացան զլխումս:

9 0 5 Թ.

Սովորելու հավաս չկա: Սկսեցի յերկուններ ստանալ: Զոր-բորդ դասարանը փոխադրվեցի միայն նրա համար, վոր գլուխս քարով ջարդել էյին (Ռիոնի ափին կռվել էյի): — Խղճացին վերաքննութունների ժամանակ: Ինձ համար հեղափոխութունն սկսվեց այսպես. իմ ընկերը՝ քահանայի խոհարար Իսիդորը, ուրախութունից վոտարբերիկ թռավ պլիտայի վրա — սպանել էյին դեներալ Ալիխանովին: Վրաստանի ճնշողն եր: Ծայր առան

ցույցներն ու միտինդները: Յես ել գնացի: Լավ եր: Ըմբռնում եմ նկարչորեն՝ անարխիստները սև են հագել, եսերները՝ կարմիր, եսդեկները՝ կապույտ, մնացած գույներով ֆեդերալիստները:

ՍՈՑԻԱԼԻՉՄ

Ճառեր, լրագրեր: Ամեն ինչից—անծանոթ հասկացողութիւններ և խոսքեր: Բացատրութիւն եմ պահանջում ինքս ինչից: Պատուհաններում սպլտակ զրքոյկներ: «Մըրկահայ»: Նույն բանի մասին: Առնում եմ ամեն ինչ: Վեր կենում առավոտը 6-ին: Կարդում եմ թուռն: Առաջինը՝ «Կորչեն սոցիալ-դեմոկրատները»: Յերկրորդը՝ «Տնտեսագիտական զրույցներ»: Ինձ ամբողջ կյանքումս զարմացրեց սոցիալիստների ընդունակութիւնը փաստերը պարզաբանելու, աշխարհը սխտեմի վերածելու խնդրում: «Ինչ կարդալ»— կարծեմ՝ Ռուբակին: Կարգացի ամեն բան, ինչ խորհուրդ եր տրվում: Շատ բան չեմ հասկանում: Հարցնում եմ: Ինձ մտքին մարքսիստական խմբակ: Ընկա «Երֆուրտյան»-ին: Կեսը: «Լյուծակեն-պրոլետարիատի» մասին: Սկսեցի ինձ սոցիալ-դեմոկրատ անվանել, հորս բերդան հրացանները փախցրի եսդեկային կոմիտե:

Պատկերով դուր յեկավ Լասսալը: Յերեի նրա համար, վոր անմորուս եր: Ավելի ջահելատես: Լասսալին յես շփոթում եյի Դեմոսֆենի հետ: Գնում եմ Ռիոնի ասիլ: Ճառեր եմ արտասանում՝ բերանս քարեր լցրած:

ՌԵՍԿԻՏ

Ըստ իս, սկսվեց հետեյալից. Բառամանի հիշատակին կադմակերպված ցույցին, խուճապի (թերևս, ցրման) ժամանակ իմ գլխին (յերբ վայր եյի ընկել) մի մեծ թմբուկ դիպավ: Յես վախեցա, կարծում եյի՝ ինքս եմ տրաքել:

9 0 6 Թ.

Հայրս մեռավ: Մատը ծակել եր (թղթերն իրար կարելիս): Արյան վարակում: Այդ որվանից քորոցներ տանել չեմ կարող: Բարեկեցութիւնը վերջացավ: Հորս թաղումից հետո՝ մեզ մոտ

3 ուրբի կար: Բնադաբար, տենդադին մենք ծախսեցինք սեղաններն ու աթոռները: Շարժվեցինք դեպի Մոսկվա: Ինչու: Նույնիսկ ծանոթներ չկային:

ՃԱՆԱՊԱՐՀ

Ամենից լավը Բադուն ե: Վիշկաներ, ցիստերներ, լավագույն դուխի—նավթ, իսկ դենը՝ ստեպներ: Անապատ նույնիսկ:

ՄՈՍԿՎԱ

Իջևանեցինք Ռադումովսկում: Քրոջս ծանոթները— Պլոտնիկովներն են: Առավոտը գնացքով— Մոսկվա: Բնկարանիկ վարձեցինք Բրոննայա փողոցում:

ՄՈՍԿՎԱՅԱՆԸ

Ուտելիքի կողմից վատ ե: Կենսաթոշակ— 10 ուրբի ամսենը: Յես ու յերկու քույրերս սովորում եյինք: Մայրս ստիպվեց վարձով տալու սենյակներ և ճաշեր: Սենյակներն անպետք եյին: Աղքատ ուսանողներ եյին կենում: Սոցիալիստներ: Հիշում եմ—առաջին «բուլճիկին» իմ առջև՝ Վասյա Կանդելակին:

ՀԱՃԵԼԻՆ

Ուղարկված եյի նավթի: 5 ուրբի: Կոլոնիալ խանութում ինձ տվին 14 ուրբի 50 կոպեկ մանրոն: 10 ուրբի— գուտ վաստակ: Խղճամովեցի: Յերկու անգամ խանութ անցա («Երֆուրտյան» ինձ մաշել եր): Ո՞վ եր հաշվի մեջ սխալվել, տերը, թե ծառայողը, — կամաց՝ հարցնում եմ գործակատարին: Տերը: Գնեցի ու կերա չորս շաքարահաց: Մնացածը ծախեցի Պատրիարքի լճակում նավակով ման դալուն: Այն որվանից շաքարահաց տեսնել չեմ կարողանում:

ԱՇԽԱՏԱՆՔ

Ընտանիքը փող չունի: Ստիպված եյի կիզաքանդակել ու նկարել: Հատկապես մտքումս են մնացել դատական ձվերը: Կլոր, պտտվում ու ճռճում են, դռների պես: Զվերը վաճառում եյի Նեդլիննայա փողոցի մի տնայնադորձական խանութի: Հա-

տը 10-15 կողակով: Այն որից անսահման ատում եմ բեմերին, ռուս վոճն ու տնայնագործութունը:

ԳԻՄՆԱԶԻԱ

Փոխադրվեցի 5-րդ դիմնազիայի 4-րդ դասարանը: Միավորները՝ թույլ ձևով զանազանակերպված՝ յերկուներով: Նստարանիս տակ՝ «Անտի-Դյուրինդ»:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Բեկտորիստիկան ամենեվին չեյի ընդունում: Փիլիսոփայութուն: Հեզել: Բնագիտութուն: Բայց՝ զլիսավորապես՝ մարքսիզմ: Չկա արվեստի մի ստեղծագործութուն, վորով յես տարվեյի ավելի, քան Մարքսի «Առաջաբանով»: Ուսանողների սենյակներից դալիս եր անլեզալ գրականություն: «Փողոցային կռվի տակտիկան» և այլն: Վորոչակի հիշում եմ լենինյան կապտագույն «Յերկու տակտիկա»-ն: Դուր եր գալիս, վոր գիրքը մինչև տառերը կտրված եր: Անլեզալ կերպով խցկելու համար: Առավելագույն տնտեսության եսթետիկա:

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՎՈՏԱՆԱՎՈՐԸ

Յերրորդ դիմնազիան հրատարակում եր փոքրիկ անլեզալ ժողոնալ— «ПОРЫВ»-ը: Վերավորվել էյի: Ուրիշները դուր եմ, իսկ յես չեմ կարող: Սկսեցի գրիչս ճոճաացնել: Ստացվեց անասելիորեն հեղափոխական և նույն չափով այլանդակ: Այժմյան Կիրիլլովի պես մի բան: Վոչ մի տող չեմ հիշում: Գրեցի յերկրորդը: Քնարերգական դուրս յեկավ: Անհամատեղելի համարելով սրտի այգալիսի վիճակն իմ «սոցիալիստական արժանապատվության» հետ՝ գրելը թողի իսպառ:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1908 թիվ: Մտա ՌՄԴԲԿ (բուհիկների) կուսակցության մեջ: Քննության յենթարկվեցի առևտրա-արդյունաբերական յենթառայոնում: Բռնեցի: Պրոպագանդիստ: Գնացի բուլկեզործների մոտ, հետո՝ կոչկալարների և վերջապես՝ տպագրիչների մոտ: Համաքաղաքային կոնֆերանսում ընտրեցին Մ. Կ.

անդամ: Կոչվում էյի «ընկեր Կոստանտին»: Այստեղ աշխատելու ժամանակ չեղավ— ձերբակալեցին:

ՁԵՐԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրողին իողոցում վոստիկանների դարանն ընկա: Մեր անլեզալ տպարանը: Կերա բլոկնոտս: Հասցենեղով եր և կազմած: Պրեսնյայի վոստիկանական թաղամասը: Ոխրանկա: Սուչչեվսկի վոստիկանական մասը: Քննիչ Վոլտանովսկին (ըստ յերևույթին իրեն խորամանկ եր համարում) ստիպեց գրել թեւադրությամբ. ինձ մեղադրում էյին պրոկլամացիա գրելու մեջ: Յես անհուսալիորեն սխալներ արի թեւադրության մեջ: Գրեցի «СОЦИАЛЬНО-ДИМОКРИТИЧЕСКАЯ»: Խաբեցի: Բաց թողին յերաշխափորությամբ: Վոստիկանատանը տարակուսանքով կարգացի «Սանին»-ը: Չգիտես ինչու, այդ գիրքը վոստիկանական ամեն մի մասում ել կար: Ըստ յերևույթին հողեփրկչական եր:

Դուրս յեկա: Մոտ մի տարի— կուսակցական աշխատանք: Յեվ նորից կարճատև ձերբակալում: Վերցրին ատրճանակս:

ՅԵՐՐՈՐԴ ԶԵՐԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր տան կենվորները փորում են տազանկայի բանտի տակը: Ազատելու տաժանակիր կանանց: Աջողվեց փախուստ կազմակերպել Նովինսկի բանտից: Ինձ բռնեցին: Տանն ատրճանակ և անլեզալ գրականութուն գտան: Չեյի ուզում նստել բանտում: Սկանդալ էյի անում: Փոխադրում էյին մի վոստիկանատնից մյուսը, Բասմաննայա, Մեչչանսկայա, Մյասնիցկայա և այլն— և վերջապես՝ Բուտիրկի բանտը: Մենարան № 103:

ԲՈՒՏԻՐՑԱՆ 11 ԱՄԻՍՆԵՐ

Կարևորագույն ժամանակ ինձ համար: Յերեք տարվա տեսականից ու փորձնականից հետո՝ վրա ընկա բեկտորիստիկային:

Կարգացի ամբողջ նորագույնը: Միմվոլիստներ Բելիյ, Բայմոնտ: Չեկան նորույթն հավասի յեր բերում: Բայց ոտար եր: Թեմաները, պատկերները իմ կյանքից չեյին: Փորձեցի ինքս գրել նույնքան լավ, սակայն այլ բանի մասին: Պարզվեց,

վոր նույն ձևով ուրիշ բանի մասին— չի կարելի: Դուրս յեկավ չինծու և հեղափոխական— լալիան: Ինչ վոր այսպիսի մի բան.

Անտառներն հազան վոսկի և պուրպուր,

Արևն եր խաղում դմբեթներում բյուր,

Սպասում էյի, բայց կորչում էյին ամիսների մեջ

Հարյուր և հարյուր որեր սնամեջ:

Մի ամբողջ տետրակ լցրի այսպիսի վոտանավորներով: Շնորհակալություն բանտի հսկիչներին— դուրս գալու միջոցին խլեցին: Թե չե՝ կարող էյի նույնիսկ տպագրել:

Արդիականը կարդացի—ալրծա, վրա տվի կլասիկներին: Բայրոն, Շեքսպիր, Տոլստոյ: Վերջին դերքը— «Աննա Կարենի»-ն եր: Չվերջացրի: Գիշերով դուրս կանչեցին «իրերով, քաղաքի միջով»: Այդպես ել չիմացա՝ ինչով վերջացավ այդ տեղ նրանց, այդ Կարենիները պատմությունը:

Ինձ բաց թողին: Յես պետք է յերեք տարով Տուրուխանսկի գնացի (Ոխրանկան եր վորոշել):

Նստածս ժամանակ ինձ դատեցին առաջին դործով— մեղավոր ե, բայց հասակը փոքր ե: Յենթարկել վոստիկանության հսկողությանը և ծնողների պատասխանավությանը հանձնել:

ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ԴԻԼԵՄՄԱՆ

Դուրս յեկա գրդոված: Նրանք, վարոնք յես կարդացել էյի,— այսպես կոչված մեծ էյին: Սակայն ինչքան դժվար չե նրանցից լավ գրելը: Յես հիմա ել արդեն ունեմ ճիշտ վերաբերմունք աշխարհի հանդեպ: Միայն հարկավոր ե փորձ արվեստի մեջ: Վո՞րտեղից վերցնել: Յես համբալ եմ: Յես պետք ե լուրջ դպրոց անցնեմ: Իսկ յես դուրս եմ նետված նույնիսկ գիմնադիսցի, նույնիսկ Ստրոգանովի ուսումնարանից: Յեթե մնալու լինեմ կուսակցության մեջ,— պետք ե դառնամ անլեզալ: Անլեզալ մնալով, թվում եր ինձ, բան չես սովորի:

Հեռանկարս— ամբողջ կյանքում գրել թուղթիկներ, դուրս հանել մտքեր, վերցրած ճշմարիտ, բայց վոչ իմ հորինած գրքերից: Յեթե իմ միջից հանեն— թափ տան կարդացածս, ինչ կմնա: Մարքսիստական մեթոդը: Բայց մանկական ձեռների մեջ չի՞ ընկել արդյոք այդ մեթոդը: Դյուրին ե այն գործադրել,

յերբ գործ ունես միայն յուրայինների մտայնության հետ: Հապա թչնամուն հանդիպելո՞ւս: Ձե՞ վոր Բելից ավելի լավ յես այնոհանդերձ դրել չեմ կարողանում: Նա իրենի մասին խոսում ե ուրախ— «անանասը նետում ե յերկինք», իսկ յես իմինի մասին նվում եմ— «հարյուր և հարյուր որեր սնամեջ»: Մյուս կուսակցականների բանը լավ ե: Նրանք համալսարան ել ունեն: (Իսկ բարձրագույն դպրոցը— յես դեռես չգիտեյի, թե դա ինչ բան ե— յես այն ժամանակ հարգում էյի):

Ի՞նչ կարող եմ հակադրել վրաս ծանրացած հնության ես— թետիկային: Մի՞թե հեղափոխությունը ինձնից չի պահանջելու լուրջ դպրոց: Յես անցա այն ժամանակ դեռ կուսակցական ընկեր Մեդվեդեվի մոտ.— Ուղում եմ կերտել փոցիալիստական արվեստը: Սերյոժան յերկար ծիծաղեց՝ ասելով. «աղիքդ բարակ ե»:

Կարծում եմ, այնուամենայնիվ, վոր նա թերազնահատեց իմ աղիքը:

Յես ընդհատեցի կուսակցական աշխատանքը: Յես նստա սովորելու:

ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԿԻՋՐԸ

Թվում եր՝ չեմ կարող վոտանավոր գրել: Փորձերս վողբալի էյին: Ձեռք դարկի նկարչությանը: Սովորում էյի ժուկով սկու մոտ: Ինչ վոր տիկիչների հետ արծաթե սերվիզներ էյի նկարում: Մի տարի հետո գլխի ընկա՝ ձեռագործ եմ սովորում: Գնացի Կելինի մոտ: Ռեալիստ ե: Լավ նկարող: Լավագույն ուսուցիչ: Կայուն ե: Փոփոխվող:

Պահանջն եր վարպետություն, Հոլբեյն: Տանել չեր կարող սիրունիկ բաներ:

Հարգած պոետս— Սաշա Չյրնին ե: Ուրախացնում եր նրա հակաեսթետիզմը:

ՎԵՐՁԻՆ ԴՊՐՈՑԸ

«Գլխի» վրա նստեցի մի տարի: Մտա նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանը.

միակ տեղը, ուր ընդունեցին առանց բարեհուսութեան վկայականի: Լավ պարապում եյի:

Զարմացնում եր՝ ընդորինակողներին շոյում են,— ինքնուրույններին քշում: Լարիոնով, Մաչկով: Հեղբնաղդով դուրս արվողներին կողմն եյի:

ԴԱՎԻԹ ԲՈՒՐԼՅՈՒԿԸ

Ուսումնարանում յերևան յեկավ Բուրլյուկը: Տեսքը հանդուգն է: Լոռնեթ: Սքուրթուկ: Ման է գալիս յերգելով: Յես սկսեցի վիճել հետը: Գրեթե դիպանք իրար:

ԾԽԱՐԱՆՈՒՄ

Ազնվականների ժողովատանը: Համերգ: Ռախմանինով: Մեռածներին կղզին: Փախա անտանելի մեղեդայնացրած ձանձրույթից: Մի բոսկե անց՝ նաև Բուրլյուկը: Քրքջացինք իրար յերեսի: Դուրս յեկանք միասին թափառելու:

ԱՄԵՆԱՀԻՇԱՏԱԿԵԼԻ ԳԻՇԵՐԸ

Խոսակցութուն: Ռախմանինովյան ձանձրույթից անցանք ուսումնարանայինին, ուսումնարանայինից՝ բովանդակ կլասիկական ձանձրույթին: Դավիդի դայրույթը— ժամանակակիցներից առաջ անցած վարպետի դայրույթ եր, իմը— պաթոս սոցիալիստի, վոր դիտե հնի խորտակման անհրաժեշտութունը: Ծնվեց ռուսական ֆուտուրիզմը:

ՀԱՋՈՐԴԸ

Յերեկն ինձ հաջողվեց մի վոտանավոր գրել: Ավելի ճիշտ՝ կտորներ: Վատն է: Վոչ մի տեղ չի տպագրված: Գիշեր է: Սրեաենսկի բուլվար: Կարդում եմ սրողերս Բուրլյուկին: Ավելացնում եմ՝ իմ ծանոթներից մեկն է գրել: Դավիդը կանգ առավ: Նայեց ինձ: Գոռաց. «Այդ հո հենց ինքներդ եք գրել: Դուք հո հանճարեղ պոետ եք»: Իմ նկատմամբ այդպիսի վիթխարի և վոչ արժանի մակդիրի դործադրութունն ուրախացրեց ինձ: Յես ամբողջապես նվիրվեցի վոտանավորի: Այդ յերեկո յես միանգամայն անսպասելիորեն դարձա պոետ:

Արդեն առավոտյան Բուրլյուկն ինչ վոր մեկի հետ ինձ ծանոթացնելով՝ ասաց բասաձայն. «Ձե՞ք ճանաչում: Իմ հանճարեղ բարեկամը: Հռչակավոր պոետ Մայակովսկին»: Հրում եմ: Բայց Բուրլյուկն անհողդողդ է: Հեռանալիս՝ դեռ մոնչում ել եր ինձ վրա. «Այժմ գրեցեք: Թե չե՞ դուք ինձ դնում եք ամենահիմար դրութեան մեջ»:

ԱՅԴՊԵՍ ԱՄԵՆ ՈՐ

Ստիպվեցի գրել: Յեվ գրեցի (առաջին պրոֆեսիոնալ, տպագրված) «Բոսորագույնն ու սպիտակը» և այլ բաներ:

ՍՔԱՆՁԵԼԻ ԲՈՒՐԼՅՈՒԿԸ

Մշտական սիրով մտածում եմ Դավիդի մասին: Հիանալի բարեկամ: Իմ իսկական ուսուցիչը: Բուրլյուկը դարձրեց ինձ պոետ: Կարդում եր ինձ համար Ֆրանսիայի և Գերմանիայի դրողներին: Գրքեր եր ճխտում ձեռքս: Ման եր գալիս և խոսում անվերջ: Մի քայլ հեռու բաց չեր թողնում ինձ: Տալիս եր որական 50 կոպեկ: Վոր առանց քաղցելու գրեմ:

Ծննդին ինձ տարավ իր մոտ Արվայա Մայակովսկի: Այնտեղից բերի «Նավահանդիստը» և ուրիշ գործեր:

«Ա. Պ. Տ. Ա. Կ. Ը»

Մայակովսկից վերադարձանք: Յեթե վոչ պարզորոշ հայացքներով, դոնե սրված տեմպերամենտով: Մոսկվայումն եր Խլերնիկովը: Այն ժամանակ նրա հանդարտ հանճարեղութունն ինձ համար բոլորովին մութի մեջ եր մնացել Դավիդի հախուռնութեան պատճառով: Այդտեղ ել յերևան յեկավ խոսքի ֆուլթուրիստական ճիզվիզ Կրուչոնիկը:

Լիրիկայի մի քանի գիշերներից հետո մենք միասին ծնեցինք մանիֆեստը: Դավիդը հավաքեց, արտագրեց, յերկուսով անվանարկեցինք և լույս ընծայեցինք «Ապոսակ հառարակական ճաչակին»-ը:

«Բուրժուական»-ի ցուցահանդեսները: Դիտարկումներ: Իմ և Դավիդի կատարել ճառերը: Լրագրներն սկսում եյին լըց-վել Ֆուլթոնի դմով: Տոնն այնքան եւ քաղաքավարի չէր: Այս-պես որինակ՝ ինձ պարզապէս «չան վորդի» եյին անվանում:

ԴԵՂԻՆ ԿՈՅՏԱ

Կոստյումներ յես յերբեք չեմ ունեցել: Ունեյի յերկու շա-պիկ զգլելի տեսքով: Փորձված միջոց եր— զարդարվել փողկա-սկով: Փող չկա: Բրոջիցս վերցրի դեղին ժապավենի մի կտոր: Կապեցի: Ֆուլթոն: Ուրեմն մարդուս մեջ ամենանկատելին ու դեղեցիկը— փողկապն է: Ակներեւ ե՝ մեծացնես փողկապը— կմեծանա Ֆուլթոնը: Իսկ վորովհետեւ փողկապների չափը սահ-մանափակ է, յես խորամանկություն բանեցրի. չինեցի փող-կապային չափիկ և չափկային փողկապ:

Տպարկությունն անվանելի յեր:

ՀԱՍԿԱՆԱԼԻ ՅԵ

Արվեստի դեներալիտետը զայրացած է: Իշխան Լվովը: Ուսումնարանի դերեկտորը: Առաջարկեց դադարեցնել քննա-դատությունն ու ադիտացիան: Հրաժարվեցինք: «Նկարիչների խորհուրդը»՝ մեզ արտաքսեց ուսումնարա-նից:

ՈՒՐԱՆ ՏԱՐԻ

Շրջում եյինք Ռուսաստանով: Յերեկութներ: Դասախոսու-թյուններ: Նահանգապետությունն ականջները սրեց: Նիկոլայե-վում մեզ առաջարկեցին չդիպչել վոչ իշխանությանը, վոչ Պուշ-կինին: Հաճախ վոստիկանության կողմից ընդհատվում եյինք զեկուցման կեսին: Մեր ուրախ խմբին միացավ Վասյա Կամեն-սկին: Հնազույն Ֆուլթոնի տղա:

Ինձ համար այդ տարիները Փորձալ աշխատանքի, խոսքին տիրապետելու տարիներ եյին:

Հրատարակիչները մեզ չէին ընդունում: Կապիտալիստա-

կան քիթը մեղանից դինամիտ չիկներ չոտ եր առնում: Ինձնից չէին առնում և վոչ մի տող:

Վերադառնալով Մոսկվա, հաճախ ապրում եյի Բուլվարնե-րում:

Այդ շրջանն ավարտվեց «Վլադիմիր Մայակովսկի» տրագե-դիայով: Բեմադրվեց Պետերբուրգում: Լուսապարկ: Սուլեցին մինչև ծակծկելը:

14 ԹՎԱԿԱՆԻ ՍԿԻՋՐԸ

Զգում եմ վարպետություն: Կարող եմ տիրապետել թեմային: Ընդհուպ: Թեմայի հարց եմ դնում: Հեղափոխական թեմայի: Մտածում եմ «Վարտիկավոր ամսի» մասին:

ՊԱՏԵՐԱԶՄ

Ընդունեցի հուզված: Սկզբում միայն դեկորատիվ, ազմկա-յին կողմից: Բանաստեղծություն՝ «Պատերազմը հայտարարված է»: Պատվիրած պլակատների նկարում:

ՈԳՈՍՏՈՍ

Առաջին ճակատամարտը: Ընդհուպ կանգնեց պատերազմա-կան սարսափը: Պատերազմը զգլելի յես: Թիկունքը՝ առափել զգլելի: Պատերազմի մասին խոսելու համար՝ հարկավոր է այն տեսնել: Գնացի կամավոր գրվելու: Թույլ չտվին: Բաղեհուսու-թյուն չկա:

Գնդապետ Մոդլի գլխում ևս գտնվեց մի լավ գաղափար:

Ձ Մ Ե Ռ

Գարշանք և ատելություն դեպի պատերազմը: «Ախ, փա-կեցեք, փրկեցեք լրագրների աչքերը» և այլ զգվածքներ:

Հետաքրքրությունս արվեստի հանդեպ կորավ իսպառ:

Մ Ա Յ Ի Ս

Շահեցի 65 ուրբի: Գնացի Ֆինլանդիա: Կուռիկալա:

ԿՈՒՈԿԱՆԱ

Յոթնամյա խաչի սխտեմ (յոթնադաշտային): Հաստատե-ցի յոթ ճաշկերութային ծանոթություն: Կիրակի որն «ուսում

եմ» Զուկովսկուն, յերկուշաբթի՝ Յեվրեյնովին և այլն: Հինգշաբթի որերն ավելի վատ եր— Ռեպինյան խոտեր եյի ուտում: Մի սաթեն հասակով ֆուլթուրիստի համար դա մի բան չեր:

Յերեկոները թափառում եմ պլյաթում:

Գրում եմ «Ամպը»:

Մեջս ամբարայնվել եր մոտալուստ հեղափոխության գիտակցութիւնը:

Գնացի Մուստամյակի: Մ. Գորկին: Կարգացի նրան կտորներ «Ամպից»: Զգացված Գորկին արցունքով թրջեց իմ ժիլետը: Հուլեցի վոտանավորով: Յես մի փոքր հպարտացա:

«Новый сатирикон»

65 ուրբին դնաց թեթե ու առանց ցավի: «Դատողություն անելով, թե ինչ ուտեմ» սկսեցի զրել «Новый сатирикон»-ում:

ԱՄԵՆԱՌԻՐԱՆԱԼԻ ՏԱՐԵԹԻՎ

915 թվի հուլիսը: Ծանոթանում եմ Լ. Յու. և Ո. Մ. Բրիկներին հետ:

ԶՈՐԱԿՈՉ

Սափրեցին: Հիմա ֆրոնտ դնալ չեմ ուզում: Զեվացա դժադրի: Գիշերով մի ինչ վրո ինժեների մոտ սովորում եմ ավտո դժադրել: Տպագրվելու գործն ավելի վատ է: Զինվորներին արգելում են: Ուրախացնում ե միայն Բրիկը: Գնում ե իմ բոլոր վոտանավորները տողը 50 կոպեկով: Տպագրեցի «Ֆլեյտա—վող—նաչարը» և «Ամպը»: Ամպը փետրանման դուրս յեկավ: Գրաքննությունը փչեց նրա վրա: Վեց յերես ամբողջովին կետեր:

Այդ ժամանակվանից ե իմ ատելությունը դեպի կետերը: Դեպի ստորակետերը նույնպես:

ԶԻՆՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վատթարադուլն ժամանակ: Նկարում եմ (դուրս պրծնելու համար) մեծավորների պատկերները: Գլխումս ծավալվում ե «Պատերազմ և խաղաղություն»-ը սրտումս՝ «Մարդը»:

Ավարտված ե «Պատերազմ և խաղաղություն»-ը: Մի քիչ ուշ՝ «Մարդը»: Կտորներ տպագրում եմ «Летонис»-ում: Զինվորականությանը հանգստաբար չեմ յերևում:

ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ը. 17 ԹԻՎ.

Ավտոմոբիլների հետ դնացի Դումա: Ներս պրծա Ռոձյան—կոյի կարինետը: Զննեցի Միլյուկովին: Լուռ ե: Բայց ինձ, չգիտեմ ինչու, թվում ե, թե նա կակաղում ե: Մի ժամից հետո ձանձրացրին: Հեռացա: Մի քանի որով ընդունեցի ավտոդարձի հրամանատարությունը: Գուչկովանում ե: Հին սպայությունն առաջվա պես ման ե գալիս Դումայում: Ինձ համար պարզ ե՝ զրանից հետո անխուսափելիորեն սոցիալիստներն են լինելու անմիջապես: Բուլչեիկները: Հեղափոխության առաջին խսկ որերին գրում եմ «Հեղափոխություն» պոետիսրոնիկան: Կարդում եմ դասախոսություններ՝ «Արվեստի բուլչեիկները»:

Ո Գ Ո Ս Տ Ո Ս

Ռուսաստանն աստիճանաբար կերենակիանում ե: Կորցրել են հարգանքը: Հեռանում եմ «Новая жизнь»-ից, մտահղանում եմ «Միտերիա—Բուֆֆ»-ը:

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր

Ընդունե՞լ, թե չընդունել: Այսպիսի հարց ինձ համար (և Մոսկվայի այլ ֆուլթուրիստների) գոյություն չուներ: Իմ հեղափոխությունն ե: Գնացի Սմոլնի: Աշխատում եյի: Անում, ինչ վրո լինում եր: Սկսում եմ մասնակցել նիստերին:

Հ Ո Ի Ն Վ Ա Ր

Գնացի Մոսկվա: Յելույթներ եմ ունենում: Գիշերը՝ «Պոետների կաֆեյում», Նաստասինսկի նրբափողոցում: Հեղափոխական տատիկն այժմյան կաֆեպոետական սալոնչիկների: Գրում եմ կինո—սցենարներ: Խաղում եմ ինքս: Նկարում եմ պլակատներ կինոյի համար: Հունիս: Դարձյալ Պետերբուրգ:

ՌՍՖՍՀ-ի արվեստի ժամանակը չէ։ Իսկ իմ հենց այս ժամանակն է։ Անցա Պրոլետարիատ ԲՆԵՍԻՆՍԿԱՅԿԻ մոտ։

Ինչո՞ւ կուսակցության մեջ չեմ։ Կոմունիստներն աշխատում էյին ֆրոնտներում։ Արվեստի և լուսավորության մարդում — համաձայնողականներ։ Ինձ կուղարկեյին Աստրախան՝ ձուկ վորսալու։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ը, 18 ԹԻՎ

Վերջացրի միտերիան։ Կարդացի։ Շատ են խոսում։ Բեմադրեցին։ Շուրջը սոսկայի դուռում էյին։ Մանավանդ կոմունիստականությունն անող ինտելիգենցիան։ Ել ինչեր չարեց Անդրեևան։ Վոր խանդարի։ Յերեք անգամ բեմադրեցին — հետո ջախջախեցին։ Յեվ ծայր առան «Մակբեթ»-ները։

19 Թ Ի Վ

Միտերիայով և իմ ու ընկերներին ուրիշ գրվածքներով չըջում եմ գործարանները։ Ուրախ ընդունելություն։ Վերորդի ուսյոնում կազմակերպվում է կոմֆուտ, հրատարակում են «Կոմունայի արվեստը»։ Ակադեմիաները ճոճում են։ Գարնանը տեղափոխվում եմ Մոսկվա։

Գլուխս բռնված է «150,000,000»-ով։ Գնացի Ռոստա-ազի-տացիայի։

20 Թ Ի Վ

Ավարտեցի «Հարյուր հիսուն միլիոն»-ը։ Տպագրում եմ առանց ազգանվան։ Ուղում եմ, վոր ամեն վոք շարունակելով դրի և բարեկամի։ Այդ չեյին անում, դրա փոխարեն բոլորն եր փոխեյին ազգանունս։ Միևնույն է։ Այստեղ տպագրում եմ իմ անվան տակ։

Գիշեր և ցերեկ Ռոստա։ Հարձակվում են ամեն մի տեսակ զենիկիներ։ Գրում եմ և նկարում։ Պատրաստեցի մոտ յերեք հազար սլակատ և վեց հազար մակադրություն։

Անցնելով բոլոր քաղաքներին, ատելություն, կանցելյարչ-չինայի և բթամտություն միջից՝ բեմադրում եմ միտերիայի յերկրորդ վարիանտը։ Գնում եմ I ՌՍՖՍՀ-ում, և կրկեսում գերմաներեն լեզվով Կոմիտեների 3-րդ կոնգրեսի համար։ Կրկնվեց մոտ հարյուր անգամ։

Սկսեցի դրել «ИЗВЕСТИЯ»-ում։

22 Թ Ի Վ

Կազմակերպում եմ МАФ հրատարակչությունը։ Հավաքում եմ ֆուլթուրիստներին — կոմունան։ Հեռավոր Արևելքից յեկան Ասեկը, և մեր տուրուզմբոցներին մասնակից այլ ընկերներ։ Սկսեցի դրի առնել յերրորդ տարին մշակած «Հինգերորդ ինտերնացիոնալ»-ը։ Ուտոպիա։ Կցույց տրվի արվեստը 500 տարի անց։

23 Թ Ի Վ

Կազմակերպում ենք «Լեֆ»-ը։ «Լեֆ»-ը — դա մեծ սոցիալական թեմայի ընդգրկումն է ֆուլթուրիզմի բոլոր գործիքներով։ Այս բնորոշումով, իհարկե, խնդրը չի սպառվում, — հետաքրքրվողներին հանձնարարում եմ Ժուռնալի №№-ը։ Սերա համախմբվեցին՝ Բրիկը, Ասեկը, Արվատովը, Ռոդչենկոն, Լավինսկին։

Գրեցի «Դրա մասին»։ Անձնական մոտիվներով ընդհանուր կենցաղի մասին։ Սկսեցի խորհել «Լենին» պոեմը։ «Լեֆ»-ի լոզունգներից, մեծ նվաճումներից մեկը՝ արտադրողական արվեստների ապաստեցումը, կոնստրուկտիվիզմն է։ Բանաստեղծական հավելված՝ ազդեցիկ և տնտեսական ազդեցիկ՝ ոեկլամ։ Չնայած պոետական հայ-հույների՝ համարում եմ «վոչ մի տեղ, բացի Մոսսելպրոմից»-ը ամենաբարձր վորակավորման պոեզիա։

24 Թ Ի Վ

«Հուշարձան Կուրսկի բանվորներին»։ Բազմաթիվ դատախոսություններ իՍՏՄ-ում «Լեֆ»-ի մասին։ «Հորեկենական»-ը՝

Պուշկինին։ Յեւ այդ տիպի վոտանավորները մի ցիլլ։ Ճամբորդութիւններ՝ «Թրիֆլիս», «Յալթա—Սեւաստոպոլ»։ «Թամարա և Դեմոն» և այլն։ Վերջացրի «Լենին» պոեմը։ Կարգացի բանվորական շատ ժողովներում։ Յես շատ ելի վախենում այդ պո-վորական հետ հեղտ եր իջնել մինչև հասարակ քաղաքական եմից, քանի վոր հեղտ եր իջնել մինչև հասարակ քաղաքական վերապատմումը։ Բանվորական լսարանի վերաբերմունքն ուրա-խացրեց և ամրապնդեց պոեմի պիտանիւթյան համոզմունքի մեջ։ Շատ եմ գնում արտասահման։ Յեւլրոսական տեխնիկան ինդուստրիալիզմը, յուրաքանչյուր դարձ միայնել դրանք դեռ-ևս անանցանելի նախկին Ռուսաստանին— ֆուլթուրիստ—լեֆա-կանի մշտական իդեան է։

«ԼԵՅ»-ը ծավալվում է իր աշխատանքի մեջ:

Մենք գիտենք այդ «տվյալները» — պարզապես ԴՈՅ-ի մեծ ու պաղարյուն մեխանիզմի հաճախակի կանցելյաբական անչա-հազդողվածությունն առանձին ամսադրերի նկատմամբ:

25 𐎧 𐎠 𐎡,

Գրեցի «Թռչող պրոլետարը» ազխապոեմը և ազխ Վոտանովորենբի: Ժողովածու՝ «Ինքզանցիր յերկնքներով»:

Գնում եմ յերկրի շուրջը: Այդ ճամբորդության սկիզբը՝
վերջին պոեմն է (առանձին փոստանալորներով) «Փարիզ» թեմա-
յով: Ուզում եմ և կանցնեմ չափածոյից արձակին: Այս տարի
պետք է ավարտեմ առաջին վեպս:

«ՇՈՒՐԸ» գլուխ չեկալ: Նախ՝ Փարիզում կողոպտեցին, յերկրորդ՝ կես տարվա ճանապարհորդությունից հետո՝ զնգա-
կի պես նետվեցի ԽՍՀՄ: Նույնիսկ Սան Ֆրանցիսկո (կանչել
էին դասախոսելու) չգնացի: Շրջեցի Մեքսիկա, ՀԱՄՆ և
Ֆրանսիայի ու Սպանիայի մասերը: Արդյունքը՝ գրքեր— հրա-
պարակախոսություն— արձակ: «Ամերիկայի դյուտու» և վոտա-
նավորներ— «Սպանիա, Ատլանդյան ովկիանը, Հավաննա, Մեք-
սիկա, Ամերիկա»:

սերկա, Ամերիկա»:

Վեպն ալարտեցի մտքումս, իսկ թղթի վրա չանցկացրել, փորձվեալն մինչև դրվել վերջացնելը տոպոթովում էյի առեւտր- թյամբ դեպի մտացածինը և ինքս ինձնից սկսեցի պահանջել,

Վերջինի հաղանե-հանձանե, վերջին փաստացի: Առենք դա. 26—27
Թվերի համար ել ե:

1926 年 1 月

Աչխատանքի մեջ ինձ գլխավցարար փոխադրում եմ լրացրողի դերին: Ֆեւցետոն, լողունդ: Պոետները հարահրոց են բարձրացնում, սակայն իրենք լրագրել չեն լարողանում և ավելի շուտ տղադրվում են անպատասխանատու հավելվածներ: Իսկ ինձ համար ծիծաղելի յե նայել նրանց լիրիքական տխմարության վրա, այնքան հեշտ ե դրանով դրադվել, և վոջ վոքի համար, բացի իր կնոջից, հետաքրքիր չե:

Група ње «Известия»-јуџа, «Труд»-нуџа, «Рабочая Москва»-
јуџа, «Заря Востока»-јуџа, «Бакинский рабочий»-нуџа и нуџа
[ѲЕРѲЕР]јуџа :

Յերկրորդ աշխատանքս, շարունակում եմ տրուեալուրների և մենեստրէնների ընդհատված տրադիցիան: Գնում եմ քաղաքները և կարգում: Նովոչերկասկ, Վիննիցա, Խարկով, Փարիզ, Ռոստով, Թիֆլիս, Բերլին, Կադան, Սվերդլովսկ, Տուլա, Պրագա, Լենինգրադ, Մոսկվա, Վորոնեժ, Յալթա, Յելպատորիա, Վլատկա, Ուֆա, և այլն, և այլն, և այլն:

1927 年 1 月

Վերականգնում եմ (փորձ եյին արել «կրճատելու») «ԼՆՖ»-ը արդեն «Նորը»: Հիմնական զերբը՝ մտայածինի, եսթետիկականության և արվեստով հոգեկենսակցելու դեմ, հոգուտ ագիտի, վորակավոր հրապարակախոսության և խրոնիկայի: Հիմնական աշխատանքս «Комсомольская правда»-յումն է, և ահտաժամյա մշակում եմ «Լապր»:

«Լավը» համարում եմ ծրագրային գործ, ինչպես «Վարտիկավոր ամպը» այն ժամանակի համար: Սահմանափակում բանաստեղծական վերացական պրիոմների (հիպերբոլի, վենյետային ինքնարժեք կերպարի) և խրոնիկային ու ազդեցիկոն նյութի մշակման հարմար պրիոմների հայտնագործում:

Հեղնակա՛ն պաթոս մանրու՛նքների նկարագրման մեջ, վո-
րոնք սակայն կարող են լինել նաև ճիշտ քայլ դեպի ապագան

(«սանիրները չեն նստված— լամպերը փայլում են, դներն իջեցված են», ներածություն՝ պլանների քննության, ղանադան պատմական կոլլերի փաստերի համար, փորոնք որինական են միայն անձնական ասոցիացիաների կարգով («խոսակցություն Բլոկի հետ», «Ինձ պատմում եր խաղաղ հրեան, Պավել Իլիչ Լավրտը»:

Պետք է մշակեմ ծրագրվածը:

Նաև՝ գրված են սցենարիաներ և մանկական դրքեր:

Նաև՝ շարունակել եմ մենեստրելությունս: Հավաքել մոտ 20,000 տոմսեր, մտածում եմ «Ունիվերսալ պատասխան» դրքի մասին (տոմսատերերին): Յես գիտեմ, թե ինչի մասին ե մտածում ընթերցող մասսան:

1928 թ Ի Վ

Գրում եմ «Վատ» պոեմը: Պրես և իմ գրական կենսագրությունը: Շատերն ասում եյին, «Ձեր ինքնակենսագրությունն այնքան ել լուրջ չե»: Ճիշտ ե: Յես դեռևս չեմ ակադեմիկոսացել և սովոր չեմ խնամք տանել իմ անձին, համ ել ինձ հետաքրքրում ե իմ դործը, յեթե միայն դա ուրախալի յե: Վերելք ու փայրեջք չատ գրականությունների, սիմֆոնիստներ, հեալիստներ, և այլն, մեր պայքարը նրանց դեմ— այդ ամենը, վոր կատարվել ե իմ աչքի առջև. դա մեր չատ լուրջ պատմության մի մասն ե: Դա պահանջում ե, վորպեսզի գրվի նրա մասին: Յեվ կգրեմ:

ԲԱՆԱՍՏԵՂԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՅՅ ՅԵՎ ԱՅՆՊԵՍ

Փողոցը փլվեւ, վոնց քիթը սիֆիլիտիկի,
գետը հեշտասիրություն ե՛լ լորձունքով փռված.
Նետելով սախտակեղենը մինչ վերջին տերեւիկը՝
Այգիներն հռնխին ձգվել են ցոփ ու բաց:

Յես յեւա հրապարակ,
խանձված թաղամասը
դրել ե գլխին չեկ կեղծամ, թե ինչ,
մարդիկ սոսկում են— բերնիցս կամաց
չարժում ե վոտները չծամված մի ճիչ:

Բայց ինձ չեն մեղադրի, բայց ինձ չեն հայհոյի,
ինչպէս մարդարեյի՝ կծաղկապատեն հետքս.
Գիտեն այդ փլված քթերով մարդիկ—
ձեր պոետն եմ յես:

Վոնց պանդուկ, ահալոր ե ձեր դատարանն ահեղ,
միայն ինձ չենքերի միջից բոցավառ՝
պոռնիկներն ինչպէս սրբության ձեռքի վրա կտանեն
և ասածուն ցույց կտան իրենց արդարացման համար:

Յեւ աստված լաց կլինի իմ զրքույկի վրա,
վոչ խոսքեր— ջղածդումներ են գունդուկծիկ
և կվազի յերկնքով վոտանավորներս թւի տակ
ու հեալով կկարդա իր ծանոթներին:

1914 թ.

Ձեզ, ապրողներդ քեֆերով զազիր,
տերերդ վաննայի և տաք կեղեթի,
ամոթ չի Գիորգիի ներկայացվածների մասին
կարգալ սյունյակները զաղեթի:
Գիտե՞ք դուք արդյոք շատերդ անձիրք,
վոր մտածում էք՝ ինչպես լավ խժռել,
գուցե հենց այժմ Պետրով պորտլիկի
վոտները ումբից են պոկվել:
Յեթե նա, վոր տարվել է սպանդ փութով
նկատեր հանկարծ՝ վերքերն իր մարմնին,
թե ինչպես կոտլետի մեջ քսված շուրթով
դոփալից յերգում էք Սեվերյանին:
Յեվ ձե՞զ, վոր սիրում էք ճաշեր ու կին,
պիտի տալ մեր կյանքն ի հաճույս.
Լավ է պանդուկի այն պոռնիկներին
մատուցեմ անանասի ջուր:
1915 թ.

ՍԻՐՈՎ ԻՐԵՆ Ե ՆՎԻՐՈՒՄ
ՀԵՂԻՆԱԿՆ ԱՅՍ ՏՈՂԵՐԸ

Չորս բառ:

Ծանրը, հարված ինչպես:

«Կայսրինը— կայսրին, տիրոջը՝ տիրոջը»:

Իսկ

ինձ նմանին

վորտե՞զ խցկվել,

վո՞րտեզ ե ինձ համար պատրաստված վորջը...

Յեթե յես լինեյի

փոքրը,

ինչպես Մեծ ովկիանոսը,

ալիքների թաթերին կկանգնեյի,

կզգվեյի լուսնին:

Վորտե՞զ գտնեմ ինձ համար սիրելի անուն,

ինչպես յես եմ...

Փոքրիկ յերկնքում չեր պարփակվի այդպիսին:

Ո, յեթե յես աղքատ լինեյի...

ինչպես միլիարդեր...

Փողը հոգու գողն է,

վոր կրծում է հոգին:

Իմ ցանկությունների սանձապուրծ հորդային

չեր բավի բոլոր Կալիֆորնիայի վոսկին:

Յեթե յես թլվատ լինեյի,

ինչպես Դանթը,

Պետրարկը կամ այն...

Բոցավառել հոգիս...

Յերգելով սաստել նրան— մոխրանալ...

Յեւ բառերը,

յեւ սերն իմ,

հանց հաղթական կամար,

փառահեղ,

անհետ անցնում են նրա միջով

բոլոր դարերի սիրահարներն համայն:

Ո, յեթե յես

լուռ լինեյի,

ինչպես ամպրոպ,

կնիւայի,

ցնցելով յերկրադնդի ճգնարանը դառամ:

Յեթե յես

զոռայի ամպրոպածայն,

ահուլի ուժով,

գիտավորները վշտից ցած կթափվեյին

ձեռքերով վառած:

Գիշերվա աչքերը լույսերով կկրծեյի—

ո, յեթե լինեյի յես

ազոտ,

ինչպես արեւին— ինքը...

Շատ ե հարկավոր ինձ

իմ փայլով փոռողել

յերկրի ամայացած գիրկը:

Կանցնեմ,

իմ մեծ սերը քաջ տալով ինձ հետ:

Ինչպիսի՞ գիշերում

զառանցանքային,

ախտավոր,

ինչպիսի Գողթից եմ յես սաղմնավորվել—

այսքան ահաբեկ

յեւ այսպես անհարկավոր...

1918 թ.

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԴԵՊԻ ՈՐԻՈՐԴԸ

Այս յերեկոն վճռեց—

սիրահարներ չդառնա՞լ մեզ.

մուժ ե,

ո՞վ կարող ե մեզ տեսնել, ո՞վ...

Յես խոնարհվեցի իսկապես,

յեւ իսկապես,

յես,

խոնարհվելով,

ասի նրան,

ինչպես բարի հայրիկ.

«Կրճերի քարափը շատ ե թեք—

յեղեք բարի,

հեռացեք:

Հեռացեք,

յեղեք բարի»:

1920 թ.

ՀԱՅՆԵՑՍԱԿԵՐՊ

Աչքերից չանթեր արձակեց ազդու.
 «Յես տեսա,—
 Քեզ հետ ուրիշ կին կար:
 Դու ամենաըստուր,
 ամենացած դու...»—
 Յեզ տեղաց,
 յեզ տեղաց
 յեզ տեղաց հայհոյանքը:
 Յես ուսումնական մարդ եմ, սիրելի՛ս,
 Թողե՛ք թնդյունները ձեր:
 Յեթե կայծակը չսպանեց ինձ—
 ապա ամպրոպն,
 ա՛ստված վկա, սարսափելի չե:
 1920 թ.

ՁԱԽ ՄԱՐԾ

(Նավաստիներին)

Պատրաստվեք յերթի:
 Տեղը չե դատարկ խոսքեր զրուցել:
 Լուռ, հոգեորդներ:
 Ձերն է
 Խոսքի հերթն,
 Ընկեր մառդեր,
 Ել բավ է որենքով ապրենք՝
 Աղամ ու Յեզվայից մնացած:
 Պատմության քոսոտ ձին քչենք:
 Ձա՛խ:
 Ձա՛խ:
 Ձա՛խ:
 Եյ, կապտաբլուզներ,
 Սլացեք արի:
 Ովկյաններից դենը:
 Թե՞
 Թեյդում կանդնած զրահակիրների
 Սուր կելն է մաշվել:
 Թող
 Թաղը գլխին
 Բրիտանական առյուծն հեծեծա:
 Կոմունան յերբեք չի հաղթվի:
 Ձա՛խ:
 Ձա՛խ:
 Ձա՛խ:

Անդ,

Վշտի լեռներից այն կողմ

Կուսական պայծառ մի յերկիր:

Սովից

Ու մահից դեն ծովը

Բյուր միլիոն քայլերով դպիր:

Մեղ պատեն վարձկան բանդաները թող,

Յերկաթե լավա թող վորձկան,

Ռուսիան չի մնա Անտանտի ներքո:

Ձա'խ:

Ձա'խ:

Ձա'խ:

Արծվի աչքը մի'թե կմարի:

Թե՞ մեր հայացքը հնին պիտ հառել:

Ամբապինդ սեղմիր

Կոկորդեն աշխարհի

Պրոլետարիատի մատներով ահեղ:

Դրոշներով պատիր յերկինքն աննվաճ:

Յեւ առաջ կրծքովդ խիղախ:

Ո'վ այնտեղ քայլում ե դեպ աջ:

Ձա'խ:

Ձա'խ:

Ձա'խ:

1918 թ.

ԱՐՏԱՍՈՎՈՐ ԱՐԿԱԾ ԱՄԱՌԸ, ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ ՎԼԱԴԻՄԻՐ
ՄԱՅԱԿՈՎՍԿՈՒ ՀԵՏ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ

(Պուշկինո, Ակուլովո լեռ, Ռուսյանցեվի ամառանց, 27
վերստ Յարոսլավյան յերկաթգծով).

Հարյուր քառասուն արնի ուժով
բոցավառվում եր մայրամուտը,
դեպի հուլիս եր գլորվում ամառը.
սոսկալի շող եր,

շողը հոսանուտ—

ամառանբոցումն եր այդ բանը:

Կորացել եր Պուշկինո բլրակն

Ակուլովո լեռով,

խիլ լեռան տակը

ընկած եր դյուղը—

Ծոված իր տանիք կեղևով:

Խիլ դյուղի յետևը

փոս եր

դեպ այդ փոսն անկասկած

իջնում եր արևն ամեն անդամ

դանդաղ բայց հաստատ:

Ու վաղն

աշխարհը վողողելով

յեղնում եր ալ արևն

ելի:

Յեւ որ-որին

այդ ամենն

ինձ

բարկացնում եր
սոսկալի:
Յեվ արդ մի ուր յես զայրացած,
վոր ամեն ինչ վախից խամրեց,
կիս զոռացի արեւին—
«Իջի դու ցած,
հերիք տապում թափառես»:
Յես զոռացի արեւին
«Զրիակեր,
քնքշացել ես ամպերում,
խիկ յես ախտեղ ամառ ձմեռ
նստել սլակատ եմ նկարում»:
Յես զոռացի արեւին.
«Սպասիր դու
յեվ ինձ լսիր վոսկեճակատ
քանց հենց այնպես
անդործ շրջես,
դուցե ինձ մոտ
թեյի դու դաս»:
Ինչ արի յես
յես կորա
դեպ ինձ
կամքով հլու
իր շող քայլերն
ահա փռած
դաշտում արեն ե քայլում:
Ուղում եմ վախըս չհայտնեմ,
դնում եմ յես յես շիթթված,
Արեւին այլովն ե անցնում արդեն:
Այդուն ե հառել իր աչքը:
Պատուհան,
դուռ
ճեղք մտնելով
թափվեց արեւ մասսան,
թափվեց ու շունչ առնելով

Հնչեցրեց իր բասը,
«Քչում եմ իմ լույսերն յես
առաջին անգամ
ստեղծման ուրից
ինձ կանչել ես
դե պոետ,
թեյ բեր, բեր ինձ մուրարա»:
Սահեց աչքիցն իմ՝ արցունք
չողը խելքըս եր տանում
ինքնայեռը
տալով ցույց
ասի.
«Նստիր լուսատու»:
Վոր սատանան դրդել եր ինձ
հանդդնել ու դուռը նրան.
Հվար
նստել եմ աթուին.
վախում եմ դուրս չգա վատ բան:
Բայց անսովոր մի պարզութուն
եր նա հորդում
յեվ հետզհետե
մոռանալով
լրջութունս
նստել խոսում եմ լուսավոր հետ:
խոսում եմ յես
դեսից դենից
թե հողնեցրել ե ПОСТА-ն ինձ
խիկ արեւը թե՛
«Լավ
մի տխրիր
յեվ կյանքին պարզ նայիր:
Կարծում ես
հեշտ ե
ինձ լույս տալ

— ապա մի ինքդ փորձիր,
 բայց զնում ես,
 պետք է զնալ
 զնում ես լույս տալիս նորից»:
 Սոսում եյինք մինչ մութն աշապեա
 մինչև փովեր գիշերը զով:
 ել ինչ գիշեր
 իր հետը յես
 վարժված խոսում եյի դու-յով:
 Յե՛վ շուտով՝
 մենք մտերիմներ—
 Նրա լուսին եմ յես խփում,
 իսկ նա նույնպես
 «Թե իմ ընկեր
 մենք յերկուսս ենք, յես եմ և դու:
 Գնանք պոետ,
 դռներ,
 յերգենք
 աշխարհի վորջերը դորշ:
 Յես իմ արևը կը հորդեմ,
 իսկ դու ել քոնը՝ յերգերով»:
 Հրատն սովերի,
 դիշերի բանդն
 ընկավ շողքից արևի
 յերգի,
 Լույսի շիթի է արդ,
 Լույս տուր ուր ել լինի:
 Կը հոգնի նա
 սլառկեղ կուղե
 դիշերն՝
 այդ բուրժ քնկոտը
 յես կտամ իմ
 վողջ լույսերը
 կզնգա նոր առավոտը:

Լույս տալ ընդմիջտ
 Լույս տալ չորս կողմ
 մինչև վերջին ուր յերկրի
 լուսավորել—
 ու վոչ մի խոսք—
 այ լողունդն իմ և արևի:

1920 թ.

ՀՐԱՄԱՆ № 2 ԱՐՎԵՍՏԻ ԲԱՆԱԿԻՆ

Այս ձեզ—

բաւած բարիտոններ—

վոր Ադամից ի վեր

մինչ մեր որերը բորբ

դղրդեցնում եք թատրոն կոչվող վորջերը

Ռոմեո և Ջուլիետի արիաններով:

Այս ձեզ—

նկարիչներ,

վոր ձիերի պես դեր պարարտացած՝

խժռում եք, խրխնջում զարդն Ռուսաստանի,

արվեստանոցում թաղ կացած

հնի պես խիստ որինսղորդներ

ծաղիկներ ու մարմին:

Այս ձեզ—

վոր ծածկվել միաթիկ թերթիկներով

հակատին կնճիւրներ տված՝

Փութութիւտիկներ,

խմածինիստիկներ,

ակմեխտիկներ,

հանդերի վոստաճում խճճված:

Այս ձեզ—

զգզգվածներին փոխարինող

կոկիկ սանրվածքներ,

տրեխների տեղ լաք

պրուէտկուլտցիներ,

կարկատան գցող

Պուշկինյան խունացած ֆրակի վրա:

Այս ձեզ—

պարողներ, սրինդ փչողներ,

յեվ բաց ու արձակ դավաճանողներ,

յեվ մեղանչողներ թագուն, ծածկըված,

պատկերացնողներ զալիքն ապագա

ահադեմիական որսպահելով հսկա:

Ձեզ եմ ասում

յես—

հանճարեղ եմ յես, թե վոչ հանճարեղ

վոր զիզի-բիզի բաները թողել

յեվ աշխատում եմ այժմ Ռոստայում.

Ասում եմ յես ձեզ—

քանի հրացանակոթով ձեզ չեն վռնդել,

թողեք:

Թողեք:

Մոռացեք,

թքեք

թե հանդի,

թե արիայի,

թե վարդի թփի

յեվ թե արվեստի զինանոցից վերցրած

ուրիշ զանազան բաների վրա:

Այդ ում ե արդյոք հետաքրքրում,

թե— «այս խեղճը, ախ,

ինչպես եր սիրում

յեվ ինչպես նա դարձավ դժբախտ...»

Վարպետներ

յեվ վոչ թե յերկարածամ քարողիչներ

են այսօր մեզ պետք:

Լսեցե՛ք,

ահա չողեքարչերն են տնքում ուժգին.

փչում ե ճեղքերից, հատակից.
«Մեզ ածուխ տվեցեք Դոնից:
Փակահաղործներ
յեվ մեխանիկներ զրկեք դեպոյին»:

Ամեն մի դետի ակունքում
սպուկել, մի կողքը ծակված,
նավերը վռոնում են, նվում,
«նավթ տվեք մեզ Բազմից բերված»:

Մինչ վիճում ենք, ձգձգում՝
փնտրելով իմաստը թագուն.
«Մեզ տվեք դուք ձեներ նորանոր»—
անցնում ե վայնասունն
Երերի վրայով:

Չկան տիմարներ այլևս
բերանբաց ամբոխի նման
մաեստրոյի առջև կանգնած
սպասող թե ինչ պիտ դուրս գա իր շուրթից—
Ընկերներ,
տվեք նոր գեղարվեստ
այնպիսին,
վոր պետութունը դուրս հանի կեղտից:

1921 թ.

ԺՈՂՈՎԱՄՈՒՆԵՐԸ

Հաղիվ գիշերը դառնում ե լույս.
յեվ տեսնում եմ ամեն որ յես՝
ով գլխ,
ով քաղ,
վարչություն
ու լուս
ցրվում են մարդիկ հիմնարկներ պես—պես:
Հենց հաղիվ դու շենք ես մտնում,
ու ծառայողները՝
թաթախված թղթե գործի անձրեվում,
հավաքած մոտ հիսուն թղթեր—
ամենապիտանիները՝
ահա ցրվում են դեպի ժողովներ:

Ներկայանում ես,
«Ձե՞ն կարող արդյոք թույլ տալ տեսակցել.
Յես դեռ չատ վաղուց սպասում եմ դողով»:
«Ընկեր Իվան վանիչը նիստի յե գնացել՝
յերկու հիմնարկի միացյալ ժողով»:
Մաշում ես մոտ հարյուր սանդուղք:
Կյանքը չի ժպտում:
Ու դարձյալ.
«Ձեզ ասին, վոր մի ժամից հետո դնք.
Ժողով են անում՝
բանկոտպից դնելու
մի սրվակ թանաք»:
Մի ժամ անց՝
վոչ քարտուղար կա,
վոչ քարտուղարուհի:

Դատարկ ե չորս դին :
 Բոլորը մինչ 22 տարեկան
 Գնացել են կոմպոմոլի նիստին :
 Նորից եմ յեկնում աչքս դիչերին
 Յոթհարկանի տան են հարկը վերին :
 «Ընկեր իման Վանիչն յեկա՞վ բանկոռովից» :—
 «Նա ժողովի յե
 այր բեն , դիմ-կոմի» :
 Կատաղած՝ դեպ ժողով
 իսկում եմ ուժգին ,
 Վալրենի անեծք ճամբին տեղալով ,—
 յեվ տեսնում եմ ինչ .
 նստած են կեսերը մարդկանց :
 Ո՛ր , սատանուլթյուն :
 Իսկ ո՞ւր են մյուս կեսերը նրանց :
 «Մորթե՛լ ,
 «սպանե՛լ են» ,—
 Գոռալով ընկնում եմ ներս :
 Միտքս ե խախտվել ահեղ նկարից ,
 ու լսում եմ յես
 Հանդարտագուշտ ձայնիկը քարտուղարի .
 «Նրանք յերկ-յերկու նիստի յեն մեկեն :
 Որական
 քսան նիստի պիտ հասնենք :
 Յեվ ակամայից պետք ե վոր կիսվել—
 մինչ գոտին ախտեղ ,
 Իսկ մնացածն այնտեղ» :
 Հուզմունքից չես կարող քնել :
 Վաղ առավոտ ե :
 Տենչով դիմավորում եմ լուսաբացն անմար .
 Ո՛ր , դոնե
 դարձյալ
 մի նիստ ել լիներ
 բոլոր նիստերի վերացման համար» :
 1922 թ .

ՀՈՐԵԼՅԱՆԱԿՆ

Ալեքսանդր Սերգեևիչ ,
 Խույլ տվե՛ք ներկայանալ :
 Մայակովսկի :
 Տվեք ձեր ձեռքը :
 Ահա կրծքավանդակըս :
 Լսեցեք ,
 տնքոց , այլ վոչ բարախում
 մտահոգում ե ինձ նա ,
 Կորյունս դարձան հեղ լակոտ :
 Բնավ չգիտե՛յի ,
 վոր իմ թեթևամիտ գլխում
 կրում եմ յես
 ախքան հաղար սոնն
 կրակոտ :
 Յես քարշում եմ ձեղ ,
 Իհարկե՛ զսրմացաք ,
 կտանեմ տունը :
 Հո՞ւալ տվի :
 Յավե՞ց :
 Ներեցեք ինձ , բարեկամ :
 Ինձ և ձեղ համար
 ամբարված ե
 հավերժությունը :
 Մե՞զ ինչ՝
 կորցնել
 մի քանի ժամ :

Յեկ վազենք՝
 չաղակրատելով
 ինչպես առուն,
 ինչպես դարուն—
 ազատ,
 չըղթալերծ :
 Տես վերևում՝
 Լուսինն
 աշնքան է թալմ, սիրուն,
 վոր նրան
 առանց ուղեկցի
 դուրս դալն անգամ վտանդ է մեծ :
 Յես
 ալժըմ
 ազատ եմ
 սիրուց
 ու սլակատներից :
 Խանդի արջից
 մնացել է լոկ մորթին
 ճիւղանակիր :
 Կարող ես համոզվել,
 վոր յերկրը
 թեք է նորից,—
 Նստիր
 նստուկիդ սեփական,
 ու սահիր :
 Վոչ,
 յես չեմ տրվի տրամությանը չար—
 Ու վոչ վոքի հետ
 խոսել իսկ չեմ ուզում :
 Միայն՝
 մեզ նման մարդկանց
 ուռչում է անդադար
 խոփել հանդերի
 բանաստեղծության ավազում :

Անուրջը—մնաս է,
 և դուր է յերազել,
 պետք է տանել
 ծառայության ճանճրույթը :
 Բայց յերբեմն
 կյանքը
 բացվում է քեզ նորածե
 յեվ չնչինից
 խոչորն ես
 հասկանում դու :
 Ընդդեմ լերիկայի
 դրոհել ենք սվինով
 մենք շատ անգամ,
 վնասում ենք մենք խոսքեր
 մերկ
 ու ճշմարտացի :
 Բայց պոեզիան—
 մի բան է դա սաստիկ ուրիշական.
 նա կա—
 թեկուզ վիսովըդ տաս քացի :
 Այ, որինակ,
 հենց այս—
 խոսվում է, թե մայվում այսոր :
 Կապտամուրթ,
 դեղին բեխերը կախ,
 վոնց վոր մի բերլիական
 Նարուզդոնոսոր—
 «Կոռպսալս» :
 Տվեք մեզ բաժակներ,
 գլուխ միջոցը հին
 վիշտը գինով
 խեղդելու,
 բայց նայում ես—
 Ոհ,
 Red և White star -ից

դուրս են հոսում կրկին
բազում վիզաների

խայտաբղետ դեղով :
Ձեզ հետ ինձ հաճելի յե՛—

ուրախ եմ ,
վոր հյուր եք ինձ այսօր :

Մուսան

այդ լավ ե պար դալիս
ձեր ձեռքերում :

Ինչպես եր այդ՝ խոստում
ձեր Ուղան ,

վոր...

Ձե , Ուղան չեր ,

Ոնեգինն եր

Տառյանային գրում :

— Իբրե թե

մարդը ձեր

հիմար ե ,

ծեր , անատամ ,

յես ձեզ սիրում եմ ,

անպայման իմն յեղեք , "

յես այժմ իսկ

առավոտ

պետք ե հավատամ ,

վոր կըտեսնեմ ձեզ յերեկո :—

Ամեն ինչ կար .

Լուսամուտի առաջ հողին բանալ ,

նամակներ ,

ցնցումի ժելեն ներվային :

Այ ,

յերբ

ի վիճակի չես

անդամ վշտանալ :

Այդ ,

Ալեքսանդր Սերգեյիչ ,

ավելի շատ ե ղժվարին :
Հայդա , Մայակովսկի ,
հոսիր հարավ ,

սիրտը

հանդերով տանջիր քիչ—

սերն ել , ահա ,

այստեղ մարավ ,

թանկագին վաղեմի Վաղեմիչ :

Վոչ ,

ծերությունն չեն կոչում սրան :

Պրկած

մարմինս ահագին՝

յես

ուրախությամբ

յերկուսին կտամ պատաս

բարկացեն—

նաե յերեքին :

Ասում են—

յես նյութով

ինդիվիդուալ եմ :

Entre nous...

ցենզուրը չճանկոխ :

Հաղորդեմ ձեզ—

ասում են—

տեսել են

ВЦИК-ի

անդամ յերկու

սիրահարված անդամների :

Այ—

թողեկ են բամբասանք

ու սիրտն են փայփայում :

Ալեքսանդր Սերգեյիչ ,

դուք նրանց մի ել լրսեք :

Գուցե

յես

միակս
 իսկապես եմ ցալում,
 վոր դուք այսոր
 կենդանի չեք:
 Ինձ
 կյանքում
 ձեղ հետ
 բացատրվել եր պետք:
 Այ, շուտով
 յես ել
 կմեռնեմ,
 կսկսեմ ծաղկել:
 Մահից հետո
 մենք համարյա
 իրար կողքի պիտի կանգնենք,
 Ձերը Ու
 իսկ իմը՝
 ՅՄ
 Ո՞վ է մեր միջև:
 Ո՞ւմ կողքեր ծանոթ լինել:
 Յերկիրն իմ
 պոետներից
 անչափ է աղքատիկ:
 Մեր միջև—
 այ խաթա—
 Նադսոնն է խցկվել:
 Մենք կը խնդրենք՝
 նրան—հեռու
 վորևե տեղ,
 Առ-ին մոտիկ:
 ու հաղի:
 Հաճույքներնս դողան
 անչափ
 լայնացել ե արդեն:
 Աչնան որերն,
 ինչպես բաղնիս,
 հոտում են,

խիլ ինձ համար,
 ներեցեք,
 բացվում են վարդեր,
 և յես,
 սլատկերացրեք,
 դրանք հոտոտում եմ:
 Յեվ մտքերն,
 և հանգերը
 դեղեցկացել
 ու հատուկ են,
 խմբադիրն անդամ
 աչքերն ե թարթում
 տակտով:
 Դարձել եմ տոկուն
 և աշխատում եմ,
 ինչպես ձի
 կամ նույնիսկ—
 ինչպես տրակտոր:
 Բյուջես ու ստամոքսըս
 հոյակապ են, անթերի,—
 ամբասնդվել են
 ու հավասարակշռվել:
 Հարյուրտոկոսային կրճատում
 հիմնական ծախքերի:
 և առողջացել եմ,
 և քաշս ավելացել ե:
 Ասես թե չեղվիս,
 կտոր առ կտոր,
 ողային
 տորտի
 սլատառներ են դնում,
 չլացուցիչ համ ե
 հաստատվել ինչ-վոր
 քերնիս
 անուշաբույր

շրտաւոր
 զբաւեցնողներում :
 զբաւեց
 միշտ մաքուր ե յեղեւ,
 իսկ այժմ
 մաքուր ե նաեւ
 ներսի դին :
 վարժվել եմ
 որք մի թերթից քիչ
 չըզբեւ,
 նույնիսկ,
 ուղում ես,
 Տոլստոյի քերթը սրբիր :
 խայտաբղետ ղզեստներով
 կանայք
 շրջապատել,
 հարցնում են
 անուն և հայրանունն իմ .
 ուղղակի
 կատակող,
 սրախոս եմ դարձել,
 ինչպես ասում են—
 հասարակութեան հոգին եմ :
 Դեմքով
 կարգին լցվել
 ու կարմրել եմ յես,
 և հարբուխ,
 և մահճակալ,
 խալառ մոռացել .
 — քաղաքացիներ,
 ղեղադրումս հետաքրքրում ե ձեզ,
 հայտնե՞լ...
 թե՞...
 Գիտեմ,
 չըհայտնեւ...

ստանալուց դուք հոգնեցիք,
 պատրաստ եք
 ինձ կշտամբել
 ու հայհոյել :
 Մի հուշիկեք,
 քաղաքացիներ,
 հայտնում եմ
 ահալասիկ,—
 յես
 այսօր
 թողել եմ
 ծիսելը :
 1929 թ.

Զգտումս եմ բեմեր դեպ հարյուրավոր,
Դեպ յերկտ մարդկանց աչքեր բյուրավոր :
Ինչ տարբեր են իմ յերկրի ցեղերը,
Տարբեր թե լեզուսն,
Թե տարազներս :

քրտինքը սրբելով քունքից,
սողաց նեղ թունելի կոկորդի միջով
և խլացնելով

սուրաջ

Կուռրսկյան վաղաժամից :

Կեչիներն անտառից խրճիթ
վաղու՛մ են՝

Կարծես ՄՊԱՏ-ն էս լսում,
հնչում է մոսկովյան լեզուն:

անտառով կտրված՝

խորճիթի խմբեր :

Հորերըն են կանանց
 յերեւոսմ գոհնելով տարբեր :
 Վոտանաւոր կրերեք գուք ամբողջ մի
 պարկ ,

$$l_1 w_1 l_2 l_1 \quad j \in w_1 j [\theta l_1] :$$

ՆԷ ըժողովարմ իւր ԼԺ-պլատան

$$2^{n+1} \mid \sigma_{2n+1}^2$$

սղոյից անելով,

խոհարար արեւը:

արդեն

Տխրոտ Խարկուլը թողած յետև:

միլիոն հալաղքը տոււն—

Հայրթուկէլ և ռանդան ,

யுடையது தான்

մոնց կուբանցու կոֆթան :

խոսակցութիւնը ,

սկսվեց իրավիշաստեղծելն աշխարհը, —

դւռԼիսնէրը ,

ՎՈՐԱԿԵՍ ՍԱՆՆԱՎԼԱՐԴ :

Սուլյոցը խեղդեցավ՝

Թուշում եմ կիրճերից,
սպիտակ ձյուններ, փափախներ:
Դաշույնը սեղմած՝ ինդուշներ կանգնել,
ոսերը

հետևում են

Թամքից:

Սարերից

վեր

ձյուն,

չերքե

տապն է

ըմպում,

արեն ել իող Թափում:

Թիֆլիսցոց

կիմանաս դեռ հարյուր մետրից.

դրոսնում են շողին ժամերով,

մոզային գլխարկով,

կոշիկով մեծքիթ,

կարծես փարիզցի յեն իրոք:

Ամենն

իր ձևով

է սովորում այբբենը,

նույնիսկ իր ձևով հաշվում թվերը:

Ամեն յերրորդը

ունի իր լեզուն

և իր սեփական ազդուլթյունը:

Մեկ ուր

հյուրանոց գեղով իրերս,

մոռացա,

թե ուր եմ գիշերում:

Պախուլին

հասցես

հարցրի ուսերեն,

Նա սլառասխանեց,

— Не знаю, —

Իսկ յերբ անցնում են

գիտական թեմային,

չընանակը

նեղ է

ուսերենի.

Թիֆլիսի հետ

կազանի աղաղեմիան

դրազրուլթյուն վարում է ֆրանսերեն:

Չափից դուրս սիրում եմ

Փարիզը յես ել

(գեղեցիկ են բուլվարները գիշերը):

Ե՛հ, չատ ել վոր կան

Մալարմե,

Բողլեր

և այլ նման ուրիշները:

Բայց մի՞թե

մենք՝ հրից, ջրից անցնողներս,

տարիներ

մարտերում բռնված,

կաճեցնենք

մեզ հաջորդ

փողոցայիններ

Ֆրանսիակերպ սլիփոնների նման:

Ողտադործեք,

ով անդելու, մերկ եր,

աղատուլթյունը խորհրդային յերկրի:

Գտեք ձեր արմատն

ու ձեր խոսքերը,

լեզվաբանուլթյան մթնում սողոսկեք:

Դիտեք կյանքն

առանց ակնոց-աչքակալի,

ազահ աչքերով ամուր բռնեք դուք

այն ամենն,

ինչ վոր ձեր յերկրում լավ է

և ինչ վոր լավ է Արևմուտքում:

Սակայն

չարութեան

սև բիծը վատ

մի քսեք կարմիր ձեր հոգուն :

Ընկեր ջահելներ ,

հայացքներդ Մոսկվա ,

սրեք ականջներդ դեպ ոռւս լեզուն :

Թե լինեյի յես

նեղը դառամյալ ,

անվհատ ,

առանց ճանճրութի ելի

կսովորեյի ոռւսերենը

նրա համար ,

վոր այդ լեզվով ե

խոսել լենինը :

Յերբ փողոցներում

հոսեց արնալառ

Հոկտեմբերն հրի ու մրրիկներ...

դիտեմ՝

Մոսկվայում վճռում եյին բախտն

և Կիևներին ,

և Թիֆլիսներին :

Մոսկվան

սկեսական ողաթով

չե մեղ ,

վոր տանի հողեր հետեվից մեր ,

Մոսկվան

Թանդ ե ինձ վոչ ոռւսի վորպես ,

այլ իբրև դրոշ մի հրե :

Խոսքի

յերեք խաղ

տարբեր են

մեջն իմ :

Յես

կացապներից չեմ այն բերանբաց :

Յես—

սլասլից՝ կաղակ ,

մյուսից՝

սեչվիկ ,

իսկ ծնունդովս՝

կողմից եմ վրաց :

Յերեք

տարբեր կաթիլ

մեջս համատեղած՝

առնում եմ յես այս

իրավունքն ինձ տրված—

խիեի

քաղքենուն համախորհրդային ,

Թե ձեր ,

Թե բոլոր ոռւսամոլներին :

1927 թ .

ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՊԱՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ

Գայլի՛ սկս
կըկըռծեյի՛
ամեն բյուրոկրատիզմ :
Չունե՛մ հարգանք՝
դեպի
մանդատն ամեն տեսակ :
Ամե՛ն սատանայի
մոր դի՛րկը կողարկեյի
բոլո՛ր տեսակ թըլթերը :
Միայն թե՛ սա՛...
Կուպե
և կայուտի
Փրոնտով յերկարավուն
անցնո՛ւմ է
սլաշտոնյան
ահա— հեղահամբույր :
Հանձնում են
պասպորտներ,
հանձնո՛ւմ եմ
նաև յե՛ս :
Իմ վա՛ռ,
ծիրանադո՛ւյն
անձնադրքույկըս մեծ :
Վորո՛չ պասպորտների

Հանդես—
չուրթին ժըպիտ :
Իսկ մյո՛ւս պասպորտներին՝
արհամարհանք թըքուն :
Մե՛ծ հարգանքով,
ասենք,
առնում են պասպորտներ՝
Անդլիական յերկտեղ
առյուծներով կնքուն :
Կլանելով
բարի քեռուն
հայացքներով՝
Չըհոգնելով՝
նըրան
հարգանք մատուցելուց՝
Ասես՝
«Նաչա՛յ» վորպես,
խոնա՛րհ մեծարանքով
Առնում են
պասպորտներն
ամերիկացուց :
Լեհականի՛ն—
նայո՛ւմ են՝
վոնց աֆիշին
մի ա՛յծ :
Լեհականի՛ն—
նա՛յում են
աչքերը դո՛ւրս չռած՝
վոստիկանի
փղային մի ծուլությամբ՝
Էբրե՛ թե՛
ի՞նչ մի նոր
յերկիր է լույս ընկած :
Կաղա՛մբն իսկ դըլուխների
չթեքելով՝

անցունց
 Յեւ վոչ մի ըզգացում
 չառա՛ծ իսկ
 վեջներին՝
 Առնում են
 անտարբեր՝
 պատպո՛րտը դանխացու
 Յեւ զանազան
 ե՛ւ ա՛յլն
 շվեղների։
 Բայց հանկարծ՝
 ասես թե՛
 այրող մի խանձումից՝
 Ուժեղին ծամածռվում է
 դնչուկն իմ պարոնիս,
 Յերբ պաշտոնյա պարոնըս՝
 ահա,
 դառնում է ինձ
 Յեւ
 կարմրամո՛րթ պատպորտս
 առնում է իմ ձեռքից։
 Առնո՛ւմ է՝
 վոնց վոր ու՛մբ մի,
 առնո՛ւմ է՝
 վոնց վոզնի՛,
 վոնց վոր
 յերկսա՛յր սրած
 ահե՛ղ մի ածելի,
 վոնց վոր
 քըսա՛ն խայթով զինված
 ու Փըշացող
 Յերկումետրյան բոյով
 սարսափեցի մի ոճ։
 Թարթո՛ւմ է

բազմիմաստ
 աչքով
 մի բեռնակիր․
 Իրե՛րն իմ
 կըկըրի՛ նա,
 հիմի՛,
 թեկուզ ձրի՛։
 Նայում է հարցական
 ժանդարմը լրտեսին,
 Նայում է հարցական
 լրտեսն եւ ժանդարմին
 Ինչքա՛ն մեծ հաճույքով
 կաստա՛ն ժանդարմական
 Ինձ կծեծեր վայրադ,
 ինձ իսաչ կհանեյին,
 քանի վոր՝
 իմ ձեռքում
 կար մի մուրճակիր
 Մանդաղակի՛ր
 պատպորտ խորհրդային։
 Գայլի՛ պես
 կըկըռծեյի՛
 ամեն բյուրոկրատիզմ
 Չունե՛մ հարդանք՝
 դեսլի
 մանդա՛տն ամեն տեսակ
 Այո՛, սատանայի
 մոր զի՛րկը կուղարկեյի
 բոլո՛ր տեսակ թղթերը։
 Միայն թե՛ սա՛...
 և յես
 հանում եմ այն
 գրպանից իմ լայն—
 վորպես մի դուրլիկատ

մի թանգարժեք բեռան :
Կարդացե՛ք,
և ինձ նախանձեցեք :
Քաղաքացի՛ն եմ յես
խորհրդային , մեր մեծ—
Հրդո՛ր մեր Միության :
1929 թ .

ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖԻՆՏԵՍՉԻ ՀԵՏ
ՊՈՆԶԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ֆինտեսու՛չ :
Ներեք , վոր անհանգստացնում եմ :
Շնորհակալ եմ ...
Հվրդովվեք ...
յես կըմնամ կանգնած ...
Ձեզ հետ
նուրբ հատկության
յես մի դործ ունեմ
պոետի
տեղի մասին
չարքում բանվորական :
Նրանց հետ ,
վոր ունեն
կալվածքներ , խանութ ,
յես ել եմ տուրքադրված
և պետք է պատժվեմ :
Դուք պահանջում եք
ինձնից
հինգհարյուր կես տարում
և քսանհինգ ,
վոր ձեզ դեկլարացիա չեմ տվել :
Իմ դործն
աղակից է
ամեն մի
դործի :

Նայեցեք՝

ինչքան եմ յես կորցրել,
իմ արտադրության մեջ

ի՞նչպիսի ծախքեր կան
և նյութի վրա

ծախսվում ե վո՞րքան:

Ձեզ,

իհարկե, հայտնի յե՝

ի՞նչ յերևույթ ե «հանգը»:

Ասե՛ք, թե

տողը

վերջանում ե «ընծա»,

և այնժամ

մի տող անց

կրկնելով վանկը՝

դնում ենք

ինչ վոր մի

«լամցադրիցա—ցա՛»:

Հանգը—

մուրհակ ե,

ձեր լեզվով ասած:

Ձեզնե՛կ մի տող անց—

ինդիրը սա յե:

Յե՛վ փնտռում ես

մանրունք՝

այս կամ այն վերջածանցը

հոլովման

ու խոնարհման

դատարկ կասսայում:

Քառը

տողի մեջ

խցկել կսկսես,

նա չի հարմարվում—

սեղմես՝ կջարդվի:

Քաղաքացի ֆինտեսո՛ււչ,

աղնիվ խոսք կասեմ,

պոետի

ամեն մի բառն ել փող արժի:

Մեր լեզվով ասած՝

հանգը—

տակառ հատուկ:

Տակառ դինամիտով:

Տողն ել՝

մի պատրույգ:

Տողը կծխա,

տուղիկը պայթի,

քաղաքն ել քառյակով

ողը կցնդի:

Վորտե՞ղ կդանես

և ի՞նչ տարիֆով

հանգեր,

վոր մեկեն նշելով խիեն:

Գո՛ւցե

մի հինգ հանգ

չեղած ձևերով

վենեցուկայում դեթ

մնացած լինեն:

Յե՛վ քաշում ե

ինձ

տաք ու ցուրտ կողմեր:

Նետվում եմ,

խըճըճեց ինձ ավանս, փոխառում:

Քաղաքացի՛,

հաշվառեք ուղետոմսը մեր:

Պոեզիան—

մի յերթ ե

դեպ անհայտ հեռուն:

Պոեզիան—

դա նույն հանույթն ե ռադիումի:

Մի դրամ հանույթ —

մեկ տարվա ջանք է :

Ծախսում ես

դանեւում ուղածդ բառ մի

հազար տոններով

բառային հանքը :

Բայց ի՞նչ

կիզող է

այդ բառի այրումը

բառ-հումքի

անբոց

մարմրեւում հետ :

Այդ խոսքերը ,

վոր շարժման են դնում

միլիոն սրտերը

հազար տարիներ :

Իհարկէ ,

տարբեր է պոետի տեսակը :

Թեթև ձեռք ունեն

պոետները վորքա՞ն :

Ֆոկլորանիկի պես

տողեր

կքաշի

Թե՛ իր բերանից

և թե՛ ուրիշի :

Ի՞նչ ասել

լիրիկ հրտածների մասին :

Ուրիշից տող

մտքրեց

և ուրախ է սիրտը :

Դա

սովորական

դողդուջուն է , վատնում

յերկրում շուրջառած վատնումների թվում :

Այստեղ

ներբողն

ու այդ յերգերը՝

ծախահարության

աղմուկով ծածկված՝

պատմության մեջ

կանցնեն

իրը վերադիր ծախքեր

մեր

յերկուսի կամ յերեքի

արածի վրա :

Մի փութ ,

վոնց ասում են ,

հաշի աղ կուտես

և հարյուր պապիրոս

թերևս ծխես ,

վորպեսզի

դուրս հանվի

խոսքը թանկագին

մարդկային արտեղյան

ջրհորի խորքից :

Յեւ իսկույն

կիջնի

ձեր բարձր հարկը :

Ջեղձե՛ք

իմ տուրքից .

դերո-անիվը :

Մեկ ուրբլի իննսուն է

հարյուր դլանակը ,

մեկ ուրբլի վաթսուհն՝

աղը կերակրի :

Ձեր անկետայում՝

հարցեր չատ տեսակ .

— կառք , ձիեր ունե՞ք ,

թե ձի չեք պահում :—

Իսկ ի՞նչ ,

յեթե յես
 պեղաս մի տասնյակ
 քչեւ եմ
 վերջին
 15 տարում :
 Ձեր թերթում—
 մտեք դրուժյանս մեջ—
 ծառայի ,
 դույքի
 մասին կա դրված :
 Իսկ ի՞նչ ,
 յեթե յես
 ժողովրդի առաջնորդ ե՛մ
 և միաժամանակ՝
 ժողովրդի ծառան :
 Դասակարգը
 ձայնում ե
 մեր յերգով , բառով ,
 իսկ մենք՝
 պրոլետարներս
 շարժիչ ենք դրչի :
 Հոգու
 մեքենան
 մաշում ես տարով ,
 ասում են .
 — սպառվել ե ,
 թող
 արխիվ թռչի :—
 Որո՞րի պահաս ես
 սիրում , հանդգնում ,
 ժամանակն
 իր թափով
 ճակատս ե ջարդում :
 Գալիս ե
 մարումներից ամենասոսկալին—

մարումը հոգու ,
 սրտի մարդկային :
 Յեւ յերբ
 այս արևն ,
 ինչպես չաղ վարաղ ,
 անխեղճ
 ու անհաշմ
 գալիքից յենի ,—
 արդեն
 սլատի տակ
 կլինեմ
 մեռած ,
 չարքում
 իմ տասնյակ
 այլ ընկերների :
 Հաշվեկշիռն իմ
 կազմե՛ք
 հետմահվան :
 Պնդում եմ
 և , գիտեմ , վոր յես չեմ ստում .
 դործարար ճարպիկների
 ֆոնի վրա
 այժմյան
 կլինեմ
 — միակը—
 յես անանց պարտքում :
 Մեր պարտքն ե՛
 սղնձյա շհակի պես
 դուռալ
 քաղքենի մշուշում ,
 փոթորկին շաչող :
 Պոետը
 տիեզերքի
 պարտապանն ե հար ,
 վշտի դեմ

տոկոս ,

տուգանք

վճարող :

Յես պարտք եմ

Բրողվելի

գունալապտերի առջև ,

քո առջև ,

բաղդադյան յերկինք ,

Կարմիր բանակի

և բալենու առջև

և այն ամենի ,

վոր չհասցրի

յերդեղ :

Յեւ ինչի՞ համար ե

Սենայի

այդ գնդակը :

Վոր հանդով նշան առնեն ,

հանդով մոլեղնե՞ն :

Բանաստեղծի խոսքը

ձեր հարությունն ե ,

ձեր անմահությունը ,

քաղաքացի գրաւիր :

Հարյուրամյակներ հետո ,

չըջանաւում թղթե

վերցրու տողը ,

Ժամանակն յետ դարձրու :

Յեւ կեղնի

այս որը

Փինտեսուչների հետ

հրաշքի փայլով ,

հոտով թանաքի :

Համոզված բնակի՛չ մեր այս որերի ,

ճարե՛ք

ենկապեւսից

տոմս անմահանալու

և ,

հաշվառելով

ուժն իմ յերգերի ,

վաստակա բաշխեք

յերեքհարյուր տարու :

Սակայն պոետի ուժը

այն չէ սոսկ ,

թե ձեղ

հիշելով՝

մարդիկ տան նպովք ,

վո՛չ ,

նաև այսօր

պոետի խոսքը—

գգվանք ե ,

լողունգ ,

սվին

ու մարակ :

Քաղաքացի ֆինտեսո՛ւչ ,

յես հինգ կըվճարեմ՝

բաղմապատկած

թվի

դերոները բոլոր :

Յես

իրավամբ

մի թիւ հող եմ պահանջում

բանվոր-գյուղացու

չարքում

չքավոր :

Իսկ թե՛

կարծում եք՝

վոր բոլոր դործը

այն ե ուրիշի

խոսքից ոգտըվել ,

ահա ձեզ,
համեցեք,
մշտական գրիչ»,
և դուք կարող եք
ինքներդ
դրել:

1926 թ.

ՃԱԿԱՏԱՅԻՆ ՇԱՐԱԹ

Եհեյ, ընկերներ,
Ով չունի դեռ ճակտին
Ռազմական աստղիկ՝
Լրացրեք շարքերը բանակի Կարմիր՝
Սրճադանքեք կանչին ճակատային շարքի:
Կանգնիր դու շարքի,
Վորոտա և ջարդիր:
Բոլորըս և ամեն ինչ՝ հանուն հաղթանակին.
Յեվ հացը կըլնի,
Յեվ խաղաղություն կարմիր
Յեվ կըսկզի բրկադը զրկանքի:

Թշնամին ջարդված է.
Փախչում է Թշնամին.
Մեր հարվածից խիզախ ու չիտակ:
Մի փոքր ել սեղմենք
Յեվ պատառն իսկ սահմանի
Ձի լինի յենթակա
Տերերին ըստխտակ:

Խորհրդային Ժայռերի
Կարծրության դեմ փքվելով՝
Թշնամին
Հըպատակվում է մեր ուժին, կամքին—
Մի փոքր ել սեղմենք.

Հաղթութիւնն է մոտենում—

Միացե՛ք շարքերով վերջին մեր ջանքի :

Եհէյ, ընկերներ,

Ով չունի դեռ ճակտին

Ռազմական աստղիկ,

Լրացրե՛ք շարքերը բանակի Կարմիր

Ճակատային շաբաթի կանչին ունկնդիր :

1920 թ.

ՍՈՒՋԱՆԱՎԱՅԻՆ ԿՈՄՅԵՐԻՑ

Դու պատրաստիր քեզ

Ջահել բանվոր .

Վոր դիմադրես ռազմին :

Ծովի յերեսին

և ծովի տակ խոր

բուրժուայի բկին

ուժդին ճգմիր :

Բանկիրը

չկաֆն իր

փակել է պինդ .

ռուբլի իսկ

չի տա մեզ փոխ .

Նստել են

վուկե

հատուկիկ պարկերին

անտանտային քեռիները գրգռող :

Նավերին թչնամու

սաստելով՝

չչակի պես

կոկորդինը բացե՛ք—

մենք

կոմսոմոլային ռուբլիներով

սուղանավե՛ք կըկառուցենք :

Քըշիր բուրժուային

ձըկնային խնճուկը—

ովկիանոսի փոստով .

նավերը բուրժուայի

խորտակիր

բանվորական ուրբիներով հոսուն :

1929 թ .

ՈՒՍԱԶՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԾ

Բուրժուայը

մաղբլցում է չար—

դեպի կամարն

յերկնի .

յելիր ,

ընկեր իմ , պրոլետար ,

նստիր դու ինքնաթիռ :

Զավտչիկ ,

հետ նետիր քո չուն—

ամպի մեջ—

սուլոցով .

դարձել ենք ողաչու

Հանրապետության

բանվոր և գյուղացու :

Ուր չի անցնի

հեծելասյուն ,

ուր չես անցնի

վոտքով ,

այնտեղ

ջարդում է

ողաչուն

Թշնամական հազար թռչուն :

Հառաջ :

Թուխպի մեջ հողմածուփ

թռչենք

Թեևով մեր փայլածու.
 դարձել ենք ողաչու
 Հանրապետության
 բանվոր և գյուղացու:
 Չափիլի ուժերովըդ
 հետը թընամու
 Արնով շառագունիլ
 ճամբադ
 ամպերից ել վերը—
 յերկընքում—
 հաստատելով
 կոմպենան մեր անպարտ:
 Դրոշակը մեր
 ծըլիում, և
 աստղերում
 բանվորական
 կարգերն և աճեցնում:
 Դարձել ենք ողաչուհի,
 դարձել ենք ողաչու
 Հանրապետության
 բանվոր և գյուղացու:
 1926 թ.

ԹՈՒՔԵՐԸ,
 ՄԷԿԱՆԸ,
 ՄԱՐՄԻՆԸ ԶՈՒ
 ՄԱՐԶԻՐ ԳՈՒ Ի ՆՊԱՍՏ
 ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ

Ձի վիճի վոչ վոք.
 ամառը
 ամեն մեկին
 պետք և սպորտ:
 Բայց ինչպիսի՞
 վոր ձեռքերդ ու գերանները
 թափահարես իդո՞ւր:
 Ո, վոչ,
 վոչ այդ.
 ողտավետ դարձրու
 ախորվա ամառդ:
 Շապիկըդ
 քրտունքի մեջ խաշիլ:
 Գընդակը
 դու քըշիլ
 ճակատով ու վոտքով:
 Վորպեսդի դալիքում
 նետես դու
 դնդակ պայթուցիկ—
 ի պատասխան
 սպիտակ գվարդիական
 բոմբե կարկուտի:
 Ինչո՞ւ պետք է—

մկանն
 իզուր կուտակել
 ձեզ պետք է
 աճեցնել
 «տղամարդիկ հյուսիս» :
 սովորիր ,
 ձիու մեջքին
 վազելիս ցատկել .
 սովորիր
 քշելիս
 հախուռն
 սրտակ :
 Ամառ :
 կոմսոմոլուհի
 քառասուն ե ցելսյուսով :
 Նշան են բռնում
 աչքով—
 ստահակներին բեխավոր :
 կոմսոմոլուհի ,
 լավ ե ավելի՝
 կըրակիր նազանով
 և մտածիր .
 թե դեմդ
 պաներն են
 և լորդ :
 Ճարպը
 կուտակվում ե
 ծանրը և լայն—
 գրասենյակային փորի
 դողումը ճոխ :
 Բավական ե ,
 ծառայող ,
 ճարպըդ առժամայն
 հալեցուց
 խմբակներում հրաձգող :

Խմացիր ,
 թե անդլիական ,
 թե ֆրանսիական բոքս-
 բայց վոչ նրա համար ,
 վոր ծոմոնս այտոսկր .
 այլ նրա համար ,
 վոր հանդեպ զնդակ ու սվինի—
 պահակախումբ մի ամբողջ
 դու մենակ
 անես զինաթափ :
 Յեթե սիրում եք
 վելոսիպեդ .
 նույնպես ,
 կարիք չըկա—
 իզուր տըքնես ,
 հիշիր ,
 անիվով ավելի շուտ
 քան վոտքով հետևակի
 կըհասցնես դու շտաբ
 ռազմական հեռագիր :
 Թոքերըդ զարգացրու ,
 մարմինդ և մկան ,—
 բայց վոչ նրա համար ,
 վոր կուտակես դու
 բիցեպսդ ունայն :
 Այլ վորպեսզի
 ամրապնդես
 դործը ռազմական—
 վորպեսզի
 սպիտակների դեմ
 կռվի մտնես
 լավ :
 1927 թ .

ՊՈԵՄՆԵՐ

ՎԱՐՏԻԿԱՎՈՐ ԱՄՊ

Տ Ե Տ Ր Ա Պ Տ Ի Ն

ՊՐՈԼՈԳ

Ձեր միտքը,
վոր անընթաց է մեղկացած ուղեղում—
վոնց ճարպակալ լակեյը՝ սլառկած յուղապատ
թախտին—

կը դրդոնէ սրտիս արյունոտ սպտառով.
Կուշտ կը ծիծաղեմ՝ կծու և լկտի:

Իմ հոգում՝ և վո՛չ մի մազ իսկ ըսպիտակ,
և ծերության քնքանք իր մեջ չըկա՛:
Սչխարհը վորոտացնելով՝ ձայնով իմ հսկա՝
դընո՛ւմ եմ—դեղեցի՛կ,
քսաներկումս յա:

Քնքուններ:

Դուք սերը նըվազում եք ջութակով:
Իր սերը կոպիտը լիտալրո՛վ ե յերգում:
Իսկ ձեզ, ինչպես յես, չըրջել՝ չե՛ք կարող դուք,
վորպեսզի լինե՛ք համատարած շրթունք:
Յեկե՛ք սովորելու—

Հյուրասրահից—բատիստ,
հրեշտակային լի՛ղայի չինո՛վնիցա վայելուչ:

Յեվ դո՛ւ, վոր շուրթերըդ թերթում ես հանդիստ,
ինչպես խոհարարուհին՝ ճաշադրքի մի եջ:

Ուղո՞ւմ եք—

կըլինեմ մըսից դադադած ,

— և , վորպէս յերկինք , յերանդներ փոխելով—
ուղո՞ւմ եք—

կըլինեմ անբիծորե՛ն քընքշացած ,

վոչ թե տըղամարդ—ալ ա՛մպ վարտիկավոր :

Ձե՛մ հալատում , թե կա Նի՛ցցա ծաղկահոծ :

Փառաբանո՞ւմ են կըկին իմ կողմից

տղամարդիկ , պառկոտված՝ վոնց հիվանդանոց

և կանայք գործածված՝ ինչպէս մի առած :

1.

Դուք կարծում եք , թե սա զառանցում է մալարիա՞ն :

Դա՞ յեղավ ,

յեղավ Ողեսոսայո՞ւմ :

«Կըզամ յես չորսին» — ասաց ինձ Մարի՛ան :

Ո՛ւթն է :

Ի՛նն է :

Տա՛սն է լրանում :

Ահա և յերեկոն ,

վոր դեպի դիչե՛րն ահավոր

լուսամուտից հեռացավ

մռայլ ,

դեկտեմբերյան :

Հրհռում , խրխնջում են ջահերը

հետադնդում նրան թիկունքից իր դառամ :

Այժմ՝ ինձ չեյի՛ք կարող՝ մինչև իսկ ճանաչել .

Ճապինդ վիթխարիս

Նղածդւում ,

հառա՛չ է արձակում :

Ի՞նչ կարող ե ցանկալ ախպիսի մի կունծղ :
Իսկ կունծղը չա՛տ բան ե ցանկանում :

Ձե՞ վոր՝ ինձ համար անկարելո՞ր ե այն ,

վոր յես բրոնդի՛ց եմ ,

և այն , վոր սիրտը՝ յերկաթիկ ե պաղ :

Դիչերը ցանկանում եմ դողանջս սեփական

տամ կանացիութ՛յան ,

կակղութ՛յան մեջ պահ :

Յեւ ահա

աթղահաս

սալատովել լուսամուտում ,

լուսամուտի ասպիկի՛ն եմ հալում հակատով :

Կըլինի՞ արդյոք սերը — թե՛ վոչ :

Ինչպիսի՞ն —

մե՞ծը , թե՛ չնչին փշրանքով :

Վորտեղի՞ց կըլինի մեծը այդ տեսակ մարմնում :

Յերևի փոքրի՛կ մի ,

համեստ մի սերիկ :

Նա ավտոների չչալից ե խրտջում :

Սիրում ե դանդակները կոնկաների :

Ելի և ելի ,

սեղմելով ընդհուպ

դեմքըս

չեչակալ դեմքին անձրեկ՝

սպասում եմ ,

վորոտով եմ թըջվում

քաղաքային ալեկոծման ծեփի :

Դուրս նետվելով՝ դանակով՝

կես դիչերը հասա՛վ ,

մորթե՛ց նրան , —

դե ա՛ռ :

Տասներկու՛յերորդ ժամը ընկավ ,

վոնց դիտատվածի՝ դըլուխը
էառափնատեղուց ընկնում է վա՛ր:

Ապակիներն ի՛նչ վըրա՝ դուր չանձրեկները
կախվել են,
կուտակվո՛ւմ են ծամածռանքով.
ասես թե վոռնում են քիմերաները
Փարիզյան տաճարից Աստվածամոր:

Նդուվա՛ծ:

Ի՞նչ արած—սա ե՞լ է քիչ:
Գոռալուց շուտով կըճայթի բերանըս:
Լըսում եմ.

Հանդիսո՛ւ
վոնց հիվանդը մահճակալից՝
ցատկո՛ւմ է նյարդըս:

Յեւ ահա,—

նախ նա անցնում է

հազիվ-հազ,

ապա

վազվզում է նա հուզված,

արագ, կտրուկ:

Ա՛յժըմ և նա և ուրիշ յերկուսն
ըսկըսել են մալի՛ մի ցատկոտուք:

Յեւ ցածի հաբկում

փլվում է սըվաղն առաստաղի:

Նյարդե՛րն իմ

բոլորը—

և մե՛ծ

և մանրի՛կ,

կատաղի ցատկոտո՛ւմ են.

և արդեն

վոտքե՛րն են թուլանում իմ նյարդի:

Իսկ դիչերը սենյակում տըվում է, տըվում,
աչքը ծանրացած չե՛ս հանի այդ տիղմից:

Բայց հանկարծ՝ դռներն են, ասես, կոճովում,
ասես հյուրասրահը
չի՛ կարողանում հեռացնել ատամն ատամից:

Դու յեկար

կտրուկ, վոնց «խնդրե՛մ»-ը,
տանջելով դամշը ձեռնոցիդ.
ասացիր.

«Գիտցե՞ք դուք—

ամուսնանա՛լ վճռեցի»:

Ի՞նչ արած—ամուսնացե՛ք:

Վոչի՛նչ:

Կամրապնդվեմ:

Տեսնո՞ւմ եք—ինչպե՛ս եմ հանդիսո՛ւ:

Ինչպես յերա՛կ մի

հանդուցյալի:

Հիշո՞ւմ եք,

դուք ասում էյիք.

«Ձեկ Լո՛ւնդոն,

դըրամ,

սեր

և կիրք»,—

իսկ յես տեսնում էյի մի բան.

դուք էյի՛ք—Ջիոկո՛ւնդան,

վորին պետք է հափշտակեյի՛ն:

Յեւ հափշտակեցին:

Կըրկի՛ն, սիրով լի՛, կըմտնեմ խաղի,

հրո՛ւ ճառագելով ծալքն իմ հոնքերի:

Ի՞նչ արած:

Յեւ տա՛ն մեջ, վոր տըվել է հրին,

ապրում են յերբեմն անտուններ չըջմուլի:

Գըրգըռո՞ւմ եք.

«Գի՛չ կան, քան աղքատի՛ մոտ կողեկը՝

ձեզ մոտ խենդության դմրուխտներ»:

Հիշեցե՛ք.

Կործանվել ե Պոմպեյը,
յերբ վոր Վեզուվն են գրգռեցել:
Եհէ՛յ,

պարոնա՛յք դուք,
սիրահարնե՛ր
սրբազնծովթյա՛ն,
հանցանքների՛,
սպանդի՛—

խկ դուք տեսե՞լ եք
փաստն ամենաահեղ—

դե՛մքն իմ

յերբ յես

լինում եմ բացարձակ հանգիստ:

Յեվ ըզդում եմ—

«Յես»-ըս

ինձ համար վո՛րք ե, աղոտ:

Ինչ վոր մեկն իմ միջից դո՛ւրս ե նետվում հախուռն:

Allo!

Ո՞վ ե խոսում:

Մայրի՞կ:

Մայրի՞կ.

Ձեր տղան հիվա՛նդ ե հիանալի:

Մայրի՞կ.

Յես ունեմ սրտումըս հրդեհ:

Ասացեք քույրերիս—Լյուդային, Ուլյային,—

վոր այլևս չըդիտեմ, թե վորտեղ կըմլտնեմ:

Ամեն մի խոսքըս,

կատա՛կըս նույնիսկ,

վոր յես հորդում եմ վառվող իմ բերնով,

ցատկում ե, վորպես մերկացած մի սլուռնիկ

հասարակաց տնից հրդեհվող:

Մարդիկ հոտոտում են—

սա ի՞նչ խանձահո՛տ ե:

Հավաքում են վոմանց:

Փայլո՛ւն:

Կահկաներո՛վ:

Ձի՛ կարելի սապողով:

Ասե՛ք հրչեջներին.

բոցավառվող սրտի՛ վըրա կեննն քնքշանքով:

Յես ի՛նքըս:

Աչքերս արցունքակալ կըսարպեմ տակառով:

Թողե՛ք՝ յես հենվեմ կողերիս:

Դո՛ւրս ցատկեմ: Դո՛ւրս ցատկեմ: Դո՛ւրս ցատկեմ:

Դո՛ւրս ցատկեմ:

Փլվեցի՛ն:

Ձե՛ս ցատկի սրտիցդ դուրս:

Իմ դեմքին բոցավառ—

չուրթերիս ճեղքեն—

ածխացած համբուրի՛կն ե նետվել դեպի դուրս:

Մայրի՛կ:

Ձե՛մ կարող յերգել:

Լուել ե յերգարևումբը սրտիս յեկեղեցում:

Ածխացած դարձվածքները խոսքերի ե թրվերի

թռչո՛ւմ են դանդիցըս՝

վորպես մանուկները բոցավառ մի շենքից:

Յերկընքին կառչելու ցանկությամբ մի մեծ

սարսափը՝

ճիշտ այդպես,

դեպի վե՛ր եր նետում

«Լուգիտա՛նիայի» ձեռքերը հրակեղ:

Դողցողացող մարդկա՛նց դեմ—

բնակարանային անդորրը դեպի—

նետվում ե նավահանգստից

արշալույսը հարյուրաչիկ—

ճի՛չ իմ վերջին,

դո՛ւ դեթ,

ասյն մասին, վոր այրվում եմ,
դարերում հառաչիր:

2.

Փառաբանե՛ք ինձ:
Յես զո՛ւլդ չեմ մեծերին:
Ամե՛ն ինչի վրա, ինչ կատարված է,
Դընում եմ «Nihil»-ը:

Յերբեք
չե՛մ ուզում կարգաւ յես վնչինչ:
Գրքե՞ր:
Ի՞նչ բան է գիրքը:
Առաջ մտածում եյի յես,
Թե գիրքը սարքվում է այսպես.
յեկա՛վ պոետը,
չուրթե՛րն իր թեթե՛ մի բացեց
և պարզամիտ ներշնչմամբ, անմիջապես,
— համեցե՛ք,
յերգեց:

Մինչդեռ պարզվում է,
վոր յերգելու համար՝
դու նախ
պիտի քայլես յերկար՝ խրմորումից կոշտառված
և նո՛ր միայն
յերեակայության վո՛րջան հիմար
կըթրալտա սրտիդ տիղմի՛ մեջ կամաց.
մինչդեռ յեռացնո՛ւմ են՝ հանդերի ծնդոցով՝
սիրուց և սոխակից ինչ-վոր մի ապուր,
փողոցն անլեզու գալարվո՛ւմ է տնքոցով,
չո՛նի՛ նա միջոց՝ խոսելու կամ ճըչալու:

Բաբելոնյան բուրգերը քաղաքներին՝
գոռոզացած, բարձրացնում ենք նորից,
իսկ աստված

քաղաքները
փրկում է վրան դաշտերի՝
խառնելով խոսք ու զրից:

Փողոցը տանջա՛նքն իր կրում է լուռ:
Ճիչն իր ցցվե՛լ է սեփական կոկորդում:
Տընկվել են՝ կոկորդի լայնքովը մեկ
նիհարիկ կառքեր ու թմփլիկ տակսիներ:
Հետիոտել են կո՛ւրծքն իր:
Թոքախտի՛ց էլ պինդ:

Քաղաքը փակել է ճամբան խավարով:
Յե՛վ յերբ—
այնուամենայնի՛վ—
կոկորդը կոխկռտող ամբոխը նետելով՝
խրաբանցումն այդ խորխվեց հրապարակ,
կարծվո՛ւմ եր.
Վորոտով հրեշտակային խմբերդի
թալանված աստվածը դընում եր՝ պատըփի՛ր:
Իսկ փողոցը նստել, ճչում իր գիւ.
«Գընանք խրժրե՛նք»:

Գրիմո՛ւմ են կրոնականեր և կրոնապիկներ բազմաթիվ
քաղաքի հոնքերի կընճիլը սպառնազին,
իսկ բերնումըս
քայքայվում են մեռած խոսքերի դիակներ
և յերկո՛ւմն են միայն ճարպակալ ապրում՝
«Սվո՛լոչ»-ը՝
և կարծեմ,
մի ինչ-վոր—«Բորչչ»:

Պոետներ՝
լացից ու հեկեկանքից լղկած,
փախչո՛ւմ են փողոցից՝ մազները փշաքալ.
«Այդ յերկու խոսքերով ինչպե՞ս պիտի յերգել
և որիորդ

և սեր

և ծաղիկ ցողաշաղ» :

Իսկ պոետները հեռակից՝

հաղարները փողոցի—

ուսանողներ ,

պոռնիկներ ,

կապալառուներ . . .

Պարոնա՛յք :

Կա՛նք առեք :

Դուք մոլորացիկ չե՛ք ,

դուք չե՛ք հանդըզնի վողգրմություն խնդրել :

Մենք , վիթխարիները ,

քայլքով սաժենային ,

պատառեյի՛նք պիտի և վոչ թե լըսեյինք

նրանց ,

կառչածներին՝ վորպես հալելված մի ձրի—

ամե՛ն մահապալին յերկտեղանի :

Նրանցի՞ց աղերսենք խոնարհ ու հեղ՝

թե . « Ո՛ղնեցե՛ք դուք մեզ » :

Աղաչենք չիմնի՞ համար

և արատո՞րիայի :

Ինքներ՛ս ենք ստեղծարար՝ հիմնում բոցավառ—

աղմըկում դործարանի և լաբորատորիայի :

Յես ի՞նչ դործ ունեմ ֆա՛ռստի հետ՝

վոր ֆեյե՛րիայով ուղեւային

սահում ե Մեֆիստոֆելի հետ

պարկետներո՛ւմ յեթերային :

Գիտե՛մ յես—

մե՛խն—իմ սապոգում

կոչմարային ե , քան ֆանտա՛զյան Գյոթե՛ի :

Յե՛ս ,

ամենից վոսկերերանը ,

վորի ամեն մի խոսքը

հոգի՛ յե վերածնում ,

անվանակոչությո՛ւնն ե տոնում մարմնի ,

ասում եմ ձեզ ,

մարդի վոչի՛ն իսկ մանրագույն

թա՛նկ ե , քան ամենն , ինչ անե՛լու յեմ և արի՛ :

Լսե՛ք :

Քարոզում ե՝

հեծեծանքով , դարկվելով ,

այսուվա ծուռաչուրթ Ջրաղաշտը :

Մենք

դեմքերով՝ տրորված՝ վոնց սավանն անկողնում ,

չուրթերով՝ կախ ընկած վոնց ջահաչարքը՝

մե՛նք ,

դաժանյալները քաղաքի լեպրազոր ,

ուր վոսկին ու կեղտերն են բորախտը ծածկում ,

մենք մաքո՛ւր ենք , քան վենետիկյան լազուր

ծովերով ու արևներով միանգամից ենք լվացվում :

Թքե՛լ եմ՝ թե չըկան

Հոմերոսի՛ մոտ և Ուլի՛սսի

մարդիկ—մեզ նըմա՛ն—

մըրից ծաղկատար :

Գիտե՛մ յես—

կաղոտեր արե՛ն իսկ՝

տեսնելով ,

մեր հոգու ցնո՛րքը վոսկեվառ :

Ջղերն ու մըկաններն աղոթքի՛ց ել ապահով են :

Մե՞նք մուրանք վողգրմությունը ժամանակների :

Մե՛նք—

ամեն մե՛կըս—

մեր ձեռքո՞ւմ պահում ենք

չարժափոկե՛րը մոլորակների :

Բարձրացրին Գողգոթան լսարանների

Պետրոգրադի , Մոսկվայի , Կիևի , Ուլեսսայի ,

և, չըզտնվեցին
նրանց մեջ մարդիկ,
վոր չըճչային.
«Խաչի՛ր նըրան,
խաչի՛ր»:
Բայց մարդիկ,
և նրա՛նք, վոր նեղացրել են ինձ—
ինձ համար մոտիկ և թանկ են ամենից:

Տեսե՞լ եք,
թե շունը ինչպե՛ս է լիզում ձեռքն իր ծեծողի:

Յես,
ծաղրվածքս այսորվա ցեղից անհոգի՝
վորպես մի յերկար,
անպարկեշտ անեկդոտ
տեսնում եմ ժամանակի սարերովն յեկողին,
վորին չի՛ տեսնում վոչ վո՛ք:

Ուր կարճատես հայացքն է հատվում մարդկանց՝
սոված ամբոխների գլուխներին վրան՝
փշեպատ սլաակով հեղափոխությանց
տասնըվեց թվականն և գալիս հուրհրան:

Իսկ յես—ձեզ համար՝ կարասի՛տն եմ նըրա.
յես այնտե՛ղ եմ, ուր ցա՛վ կա—ամենո՛ւր,
արցունքի ամեն՝ մի կաթիլի վրա
յես ինքս ինձ խաչում եմ ամենօր:
Այլևս չի՛ լինի՝ ներել ինձ վոչինչ:
Այրեցի՛ վողիներ,
վորո՛նց մեջ քնքշա՛նքն են ամեցրել:

Իսկ դա դժվար է—ավելի՛ մի քիչ,
քան գրավել հաղա՛ր-հաղարավոր Բաստիլ:

Յեվ յերբ՝
դալուստն իր

խռովությամբ թնդացնեք,
դեմն յեղնեք, փրկչին— .
ո՛ր, աշնժամ, յես
կըտրեմ հոգիս,
կըլնոտնահարեմ, վոր դառնա նա մեծ
և արյունոտված՝
վորպես դրո՛շ մի, կըհանձնեմ ձեզ:

3.

Ա՛խ, ինչո՞ւ այդ,
վորտեղի՞ց այդ
լուսավոր խնդությա՛ն մեջ
կեղտոտ բռնեցքների հարված:

Յեկավ,
և գլո՛ւխն իր կախեց հուսահատ
մի՛տքը՝ տների մասին խելադար:

Յեվ—
ինչպես դրեղնո՛ւտի կործանման ժամին
ջղածդումով խեղդիչ
նետվում են բաց արված լյուկը—
սեփական,
ճշալո՛ւ չափ ճոթրած իր աչքից՝
կատաղած՝ դո՛ւրս եր սողում Բուրլյուկը:

Համարյա արյունեկով կոպերն արցունքոտ՝
դուրս սողաց,
յեկավ
ու դնաց,
և քնքշությամբ՝ անսպասելի
մարդո՛ւ մեջ ճարպոտ՝

առավ և ասաց.
«Լա՛վ ե»:
Լա՛վ է, յերբ բաճկոնի՛ մեջ դեղին
խուզարկումից հոգիդ կըթափնվի:

Լա՛վ ե ,
յերբ պատժւա՛ծն՝ եշաֆոտի բերանում ,
ճըչո՛ւմ ե
«Վան-Գո՛ւտենի կակաոն ըմպիր» :

Վայրկյանն աղբյւրի ,
բարձրաճայն
բենդալյան ,
յես վո՛չ մի , վո՛չ մի բանի՛ հետ
չե՛մ փոխարինի...

Սիգարային ծըխից՝
վոնց ոյո՛ւմկան լիկյորի՝
հարբած դեմքն ե ցցվել Սևերյանինի՛ :
Ինչպե՞ս եք հանդգնում՝ ձեզ անվանել պոետ .
և դորշ մի լորի՛ պես հանել ծովծովոց :

Այսօր
անհրաժեշտ ե
մեզ
կաստետ ,
վոր յերկրագնդի դանդը ձենք :

Դուք ,
մտահոգվողները միայն մի մտքով—
«չքե՞ղ եմ պարում արդյոք» :
Նայե՛ք , թե ինչպե՛ս եմ զլարճանում ամենօր
յե՛ս—

Թղթախաղի խաղանենդ ,
հրապարակային սուտենյոր :

Ձեզանի՛ց ,
վոր տամկացել եք սիրելով՝
ձեզանի՛ց ,
վոր արցունք եք թափել դարերում՝
յես կըհեռանամ
և արևը՝ վորպես մի մոնոկլ՝
կհաղցնեմ չոա՛ծ իմ աչքերում :

Սնհալատալի կերպով կըղարդարվեմ ,
և կանցնեմ յերեսովը յերկրի
վորպեսդի՝ և դո՛ւր դամ և այրվեմ ,
իսկ առջևի՛ցըս ,
Նապոլեոնին , շղթայած՝ վորպես մո՛պս մի
կըտանեմ :

Կըպառկի , կնո՛ջ պես , յերկիրն ամբողջ
կըխաղացնի մսերն իր—ցանկանալով տրվել :
Շունչ կառնի ամե՛ն մի իր—
չուրթերն իրերի
կըսվաճանեն .
«ջանի՛կ , ջանի՛կ , ջանի՛կ» :

Հանկարծ
և ամպերը
և մնացյա՛լն ամպային
բարձրացրի՛ն յերկրնքում անասելի ճոճում ,
ասե՛ս՝ սխալազոր բանվորնե՛րն են ցրվում՝
հայտարարելով յերկրնքին՝ կասազի դործադուլ :
Գազանացած սուրում ե վորոտն ամպերում ,
զայրույթով խնչում ե սնչովն ափազա
և դեմքը յերկրնքի ծովո՛ւմ ե վայրկենապես ,
Բիսմարկի յերկաթե ծամածռումը վորպես :

Յեվ ի՛նչ վոր մեկը՝
խըճըճվելով կապերում ամպե՛ս
յերկարում ե ձե՛ռքն իր—դեպի ցած—կաֆե՛ն
և , կարճես , քնքշությամբ՝
կանացիորեն , կարճես ,
և , կարճես , վորպես Թուանոթի լաֆետ :

Դուք կարծում եք , թե դա
արե՞ն ե հայրաբար
փաղաքում կաֆեն :
Վո՛չ : Դա կըրկին

խոռվարարներին զնդակելու համար
դալիս և գեներալ Գալիֆեն:

Հանե՛ք, զբոսնողներ, ձեռքները զըրպանից,
առե՛ք դուք քարեր, դանակներ, համ ուռմբեր,
խակ յեթե չունեք դուք ձեռքեր—

յեկե՛ք, դարկվեցե՛ք ճակատով ձեր գեթ:

Յեկե՛ք քաղցածներ,

քրտնակալներ,

հեղեր,

թթվածներ լվային կեղտում,

յեկե՛ք:

Ուրբաթները, չարաթները ներկենք

տոնի՛ պես, արյունով կարմիր:

Թող յերկիրը դանակի՛ տակ կռահի,

թե՛ ուղում եր ստորացնե՛լ նա—ո՛ւմ:

Յերկիրը—

ճարպակալ վորպես սիրունի,

վորին Ռոտշիլդն եր սիրում:

Վորպեսզի դրոշները փրփռա՛ն հրաձգության

տենդում,

ինչպես ամե՛ն մի տոնին կանոնավոր՝

դեպի վե՛ր բարձրացրեք սյուները լապտերի

լաբաղնիկներին ջախջախով արյունաբոր:

Հայհոյեցի անչափ,

թախանձեցի յես շատ.

մորթեցի,

վազեցի հեռքիցը ինչ—վոր մեկի՛

կողերը կըռծեցի:

Յերկընքում, վորպես Մարսելյո՛ւ մի կարմիր՝

մայրամուտն եր ցնցվում—սարսուռով մահամերձի:

Խեղադարությո՛ւն և արդեն:

Ձի՛ լինի վռչինչ:

Գիշերը կիջնի,

կըկըծոտի

և կուտի:

Տեսնո՞ւմ եք—

յերկինքը հողալյո՛ւմ և կրկին

մի բռով

դավաճանությա՛մբ ցողված

աստղակույտի:

Իջալ,

դինարբո՛ւմ և, վորպես մի Մամա՛յ,

նստել և հատույթով քաղաքին

իբր սև:

Աչքերով չե՛ս ճեղքի գիշերն այս ամալ.

նա սև և, վորպես Աղե՛ֆ:

Նետվելով՝ կըծկըվո՛ւմ եմ անկյունում տրակտիրի,

դինո՛ւլ եմ վոդոդում հողի և սփռոց

և տեսնո՛ւմ եմ.

աչքե՛ր կան կլոր անկյունում մեկդի:

Աչքերով՝ սրտե՛րն և խըցկըվել— Մա՛յրն ասածո:

Ըստ նկարտոված շաբլոնի՝ ինչո՞ւ ճաճանչով

պարզեատրենք ամբոխը տրակտիրային:

Տեսնո՞ւմ ես—կրկին

Գողգոթացո՛ւց թքոտած

դերադասում: Են Վարավիայի՛ն:

Գուցե՛ թե, դիտմա՛մբ յես

խառնուրդով մարդկային

դեմքով իմ

նո՛ր չեմ վռչ վոքից:

Յես,

դուցե՛ թե,

ամենադեղեցի՛կն եմ

բոլո՛ր քո վորդոցից:

Տո՛ւր նրանց՝

Ժամանակի շուտափուլ ժաշվամբ,
 խնդու թշա՛ն մեջ բորբոսնած ալի անձանց,
 վոր դառնան մանուկներ՝ յենթալա աճման,
 տըղաները՝ հայրեր,
 աղջիկները՝ ծննդականներ:
 Յեւ ի նոր ծնվածներն ել, առ՛ւր, վոր աճեն
 քննախույզ միւրուքով քրմական.
 և կըզան նրանք—
 մանուկներ՝ կըմկրտեն
 անուններով իմ բանաստեղծության:
 Յես, վոր յերգում եմ՝ մեքենան և Ա՛նդլիան—
 դուցե՛ թե, պարզ կերպով,
 ամենասովորական աստվածաշնչյան
 առաքյալն եմ տասերեքերորդ:
 Յեւ յերբ իմ ձայնն ե
 անպատկառ թնդում—
 մի ժամից մինչ մյուսը,
 գիշեր-ցերեկն ամբողջ,
 դո՛ւցե, Հիսուս Բրիտո՛սն ե հոտոտում
 անմոռուկները հոգուս նորաբողբոջ:

4.

Մարի՛ա: Մարի՛ա: Մարի՛ա:
 Նե՛րս թող, Մարի՛ա:
 Չե՛մ կարող փողոցում:
 Չե՞ս ուղում:
 Սպասո՛ւմ ես,
 մինչև վոր այտերըս փո՛ս ընկնեն մի որ՝
 բոլորի՛ կողմից փորձված,
 անալի,
 յես դամ
 և անատամ մըթմութամ
 թե՛ ախոր
 «աղնի՛վ եմ զարմանալի»:

Մարի՛ա,
 տեսնում ես—
 ըսկսել եմ կորանա՛լ աբդեն:

Փողոցներում
 մարդիկ ճարպը չորսահարել քուջերում կըծակծկեն,
 կըտընկե՛ն աչքները՝
 տրորված քառասնամյա քաշքշուկում՝
 կըքրքրջան,
 վոր իմ ատամներում
 կըրկի՛ն—
 չորացած բո՛ւլկան ե յերեկվա դգվանքի:
 Անճրեւ՝ մայթերի՛ վըրա հեկեկաց.
 ջրփոսերով սեղմված խաբերան,
 խոնավ, լիզում ե փողոցի դիակը քարածածկ.
 իսկ թարթիչների՛ վրա ծեր—
 այո՛—
 թարթիչների՛ վրա ծծակների սառույցե՛
 աչքերից արցունքներ—
 այո՛—
 խոնարհա՛ծ աչքերից ջրահոս խողովակների:
 Բոլոր անցորդներին ծըծել ե յերախն անճրեւի,
 իսկ եկիպաթներում փայլում են
 ճարպոտ
 առլետն առլետի հետեից.
 տրաքվում եյին մարդիկ՝
 ուտելով ունեցածն ամբողջովին—
 և հոսում եր ճարպը ճեղքերից՝
 դետի՛ պես պղտոր՝ հոսում եր եկիպաթներից,
 բո՛ւլկայի հետ ծըծված՝
 ծամծըմվածքը հին կատրետների:

Մարի՛ա:
 Նրանց ականջում ճարպոտ ինչպե՞ս կըմտցնես
 խոսքը խաղաղ:

Թռչունքը

Վողորմությունն է խնդրում յերգով,—
յերգում ե՛ն

քաղցած և զիւ.

իսկ յե՛ս, Մարի՛ա,

մարդ եմ հասարակ,

Թոքախտավոր գիշերով Պրե՛սնյայի կեղտոտ

ձեռքի՛ մեջ խորխալած :

Մարի՛ա, ուղո՞ւմ ես, աշտպիսիսին :

Նե՛րս Թող, Մարի՛ա :

Կըսեղմե՛մ ձեռքով ջղաձիգ յերկաթե կակորդը

դանգի :

Մարի՛ա :

Կատաղո՞ւմ է անասնախումբը փողոցի :

Սեղմում են իրարանցման մասները վրդիս :

Բացի՛ր :

Յալո՞ւմ ե :

Տեսնո՞ւմ ես—խրվել են աչքերըս

ասեղները գլխարկների կանացի :

Նե՛րս Թողի՛ր :

Մանկի՛կըս!

մի՛ վախենա,

վոր վրդիս յեղային

քրտնափոր կանայք են նստած՝ վորպես սարերը

Թաց,—

այդ՝ քա՛չ եմ տալիս միջով կյանքի

միլիոններ հսկա և մաքուր սերերի

և միլիոն՝ միլիոններ սերիկների կեղտոտ և մանրիկ :

Մի՛ վախենա,

վոր կրկին,

դավաճանության մեջ վատ յեղանակի,

յես հարվեմ դեմքին հաղարավոր լավիկների :

«Մայակովսկուն սիրողնե՛ր»—

Ձե՞ վոր դա դինա՛ստիա յե

խեղադարի սրտին բաղմած Թագուհիների՛ :

Մարի՛ա, մոտեցիր :

Անամոթությամբ մերկանդամ՝

Թե դողով վախեցողի՛

բայց տո՛ւր չըխունացած սքանչելիքը չըթունքիդ՝

չե՛մ ապրել, յերբեք սրտի՛ս հետ մայիս,

մինչդեռ հարյո՛ւր ապրի՛լ կա

անցյալում կյանքիս :

Մարի՛ա,

սլոետը սոնետ է յերգում Դիանային,

իսկ յես,—

մաի՛ց. ամբողջապես,

ամբողջապես մա՛րդ—

մարմի՛նդ եմ խնդրում պարզապես,

ինչպես խնդրում է քրիստոնյան

«Չհաց մեր հանապաղոր

տո՛ւր մեզ աշտը» :

Մարի՛ա—տո՛ւր :

Մարի՛ա :

Անունը քո

վախենում եմ մոռանալ,

վորպես սլոետն է վախենում

մոռանալ ինչ-վոր

գիշերային տանջանքով ծնված մի խոսք՝

մեծությամբ հավասար ասածուն :

Մարմի՛նդ

կըպահեմ, կըխնամե՛մ յես,

վորպես գինվորը՝

կտրված պատերազմում,

անպետք,

Վո՛չ վոքի չըստականող,
Իր միակ վո՛տքն ե պահպանում:
Մարի՛ա, չե՞ս ուղում:
Ձե՛ս ուղում:

Հա՛:

Կընչանակի՛ն՝ կրկին
մուսյլ ու գլխահակ
կվերցնեմ սիրտը՝
արցունքով վողողած,
տանելու,
ինչպես շունը,
վոր տանում ե իր բունը
թա՛թն իր զնացքով կտրված:
Արյունովը սրտիս խնդացնում եմ ճանապարհին.
Կի՛տելի փոշու դույնը կընդունի կաթին արյունիս:
Հաղարավոր անգամ՝ Իրողեղացի նման կըշուրջարի
արևը յերկրի՛ն—
վորպես գլխին Հովհաննես Մկրտչի:
Յեվ յե՛րբ քանա՛կն իմ տարիների
մինչև վերջ կըսարվի՛
միլիոն արյունիկներով մի հեռք կըփռվի
իմ հոր տունը դեպի:

Դուրս կըգամ
կեղտոտված (կանալում քնելուց)
կըկանգնեմ կողք-կողքի
կըթեքվեմ
և կստեմ նրա ախանջում:

«Լսեցե՛ք, պարո՛ն աստված:
Խնչպե՞ս չեք ձանձրանում՝
յերկնային կիսելում
թաթախելով ամե՛ն ուր աչքներդ բարիացած:
Ուղո՞ւմ եք—բերեք,

սարքենք կարուսել
խմսոտախրման ծառի՛ չարի և բարու:
Ամենակալ, կընե՛ս յուրաքանչյուր չկաֆում
և այնպիսի՛ գինիներ կըշարենք շարքով,
վոր ցանկա անգամ անցնել Կի-կա-պու
Պետրոս առաքյալը մուսլամոսթ:
Իսկ դրախտում, կրկին, բնակեցնենք Յեվիկներ.
Հրամայի՛ր,—
հենց ա՛յս իսկ գիշեր,
բոլոր բուլվարներից գեղեցկագույն աղջիկներ
քա՛չ կըտամ քեզ մոտ:
Ուղո՞ւմ ես:
Ձե՛ս ուղում:
Գլո՞ւխդ ես թափահարում, ըրդո՛ւտ:
Կիտո՞ւմ ես հոնքերըդ ծեր:
Կարծում ես,
դա՛
թիկունքո՛ւմըդ,
թևավորը
դիտի՞ թե՛ ի՞նչ բան ե սեր:
Յես ե՛լ հրեշտակ եմ, յեղե՛լ եմ—
յերևացել եմ աչքիդ վոչխար շաքարեղեն,
բայց չե՛մ ուղում ել դամբիկներին նվիրել
Սեվրյան ալյուրից քանդակած վազաներ:
Ամենակարող, հնարել ես դու զույգ ձեռքեր—
այնպես ես արել,
վոր ամե՛նքն ել ունենան գլուխներ:
Իսկ ինչո՞ւ չես հնարել,
վոր անտանջա՛նք կարողանանք
համբուրել, համբուրել, համբուրել:
Կարծո՛ւմ եյի՛ առտված ես ամենազոր—
մինչդեռ դու թերուս, աստվածի՛կ ես քոսոտ:
Տեսնո՞ւմ ես—կռնում եմ
և կոշիկիս ձուկից
հանում եմ դանակ կոշկակարի:

Ստահակներ թևավոր,
Կո՛ւչ յեկեք դրախտում:
Իրարանցմամբ սարսափած փետուրներդ ցցեք:
Յես քեզ, խնկահոտով ծծված իդ՝ կըճեղքե՛մ—
Ալյա՛սկայից մինչև ախտեղ:

Թողե՛ք:

Հետ չե՛ք սլահի ինձ:
Ստում եմ,
Թե իրա՛վ եմ,
Բայց չե՛մ կարող լինել հանգիստ:
Նայեցե՛ք—
աստղերը դիտատե՛լ են կրկին
և յերկինքն՝ արյունով են ներկել սպանդի:
Ե՛յ, դո՛ւք:
Յերկի՛նք:
Գլխարկըդ հանե՛ք:
Յե՛ս եմ դալի:

Խո՛ւլ ե:

Տիեզերքն է քնել՝
դնելով իր թաթին
չնաճանճերով աստղապատ ախանջն ահադին:
1915 թ.

ՍԻՐՈՒՄ ԵՄ

Սովորաբար այդպես է

Սերը ամեն մի ծնվածին՝ ընծայված է,—
Բայց—
ծառայության մեջ,
յեկամուտի
և այլնի,
որ—որի—
կարծրանում է հողը սրտային:
Սրտին՝ մարմնին է հազցված,
մարմնին՝ շապիկ.
Բայց դա ել քիչ է:
Մեկը՝
ա՛յուլ—
Դաստակապատ է հնարել
կրճերը վողողել ոսլայով:
Ծերության սլահին են խելոքանում:
Կինը քրսվում է:
Տղամարդն ըստ Մյուլլերի
վոնց ջրադաց՝ պտտվում:
Բայց ուչ է:
Կընճիռներով է մաշկը շատանում:
Ծաղկում է սերը,
ճաղկում
և՛ սրտնեղում:

Ինձ սերը չափով եր շնորհւած :
 Բայց մանկուց
 մարդիկ,
 աշխատանքով են բռնի վարժեցւած :
 Իսկ յես—
 փախել եյի ափը Ռիոնի
 և Բ'նչ,
 թրեւիւում եյի,
 արածս՝ վոչինչ :
 Բարեկանում եր մայրիկը .
 «Հիմար, վատ տղա» :
 Գոտիով քոթակել եր սպառնում հայրիկը :
 Իսկ յես,
 հարստացած յերեքանոցով կեղծ
 բերադասում եյի խաղալ
 չափառների տակ
 զինվորների հետ «յերեք թղթիկը» :
 Առանց չափիկների բեռի,
 առանց կոշիկների բեռի
 տապալկւում եյի քութայիսյան շողում :
 Մեկ շրջում մեջքս,
 մեկ փորս արեւին,
 մինչև սրտիս զըզալն եր յերգում :
 Զարմանում եր արեւը .
 «Մեկ նայիր բոյին» :
 Նա ել—
 սըրտիկով ե :
 Զանում ե պըստիկը :
 Վո՞րտեղից ե
 սըրտ մեջ—
 մեջն այս արշինի
 տեղ—
 և ինձ,

և գետին,
 և ժայռերին հարյուրվերստանի :

— Յերբ պատանի եյի—

Պատանուն զբաղմունք չատ կա :
 Քերականություններ են
 սովորեցնում
 անմիտ տխմարները :
 Իսկ ինձ
 հինգերորդ դասարանից քշեցին :
 Գընացի
 Թափառելու մոսկովյան բանտերը :
 Մեր փոքրիկ
 սենյակային աշխարհում
 ննջարանների լիրիկներ են աճում :
 Այդ յերունդավոր լիրիկների մոտ
 Բ'նչ փնտռել :
 Այ Բ'նձ
 Բուտիրկայում են
 սովորեցրել
 «իրել :
 Տիրել Բուլոնյան անտառի՞ համար :
 Ախ քաշել բացվող ծո՞վը տեսնելիս :
 Յես
 սիրահարված եմ ահա
 «Հվւղարկավորության բյուրոյին»—
 103 կամերայի պատուհանից :
 Նայում են— արեւ ե ամեն ոք,
 և փքվում են...
 «Ինչ արժեն— իբր թե— ճառագայթիկներն այս» :
 Իսկ յես—
 զեղնաւուն մի ճառագայթին,
 վոր գդվում ե,
 այն որերում կըտայի
 աշխարհում ամբողջ ունեցածս :

Փրանսերեն գիտեք:

Բաժանում եք:

Բազմապատկում:

Հորովում հիանալի:

Յեւ հոլովեցեք:

Ասացեք—

Իսկ չենքի հետ յերգվել

կարո՞ղ եք:

Ներկարգարչի լեզուն

հասկանո՞ւմ եք:

Շուտ դու մարդկային,

նոր ե դուրս յեկել ձվից,

ձեռքը դցում ե դրքին,

դաստային տետրակներին:

Իսկ յես

ցուցանակներից եմ սովորել այբուբեն,

թերթելով

յերկաթի և թիթեղի թերթեր:

Հողապունդն են վերցնում,

խուզում,

գըջըլտում՝

ուսումնասիրում են:

Յեւ ամբողջը— պըստիկ դուրուս մի:

Իսկ յես

աշխարհադրությունը սովորել եմ

կողերովն իմ,

իզուր չե,

վոր գիշերներով պառկել եմ

դետնին:

Պղտորում են ցավատանջ հարցերը

Իւովայսկիներին:

— Դեղնամորո՞ւս ե յեղել Բարբարոսն:

Թող լինի:

Ձեմ վորվիրում վոչեծածկ անմտությունը,
ինձ հայտնի յե

Մոսկվայում ամեն մի պատմություն:

Վերցնում են Դոբրոլյուբով

(վոր չարությունն ատեն)

ազգանունն՝ ընդհակառակը

տոհմային ե:

Յես մանկությանից

ճարպոտներին ատել եմ,

վաճառելով ճաշի համար

ի՛նձ:

Սովորում են,

նըստում—

վոր դուր դան կանանց:

Պղնձե ճակատիկներով— մտքերով ունայն:

Իսկ յես

խոսել եմ

հետը չենքերի:

Ջրհան մեքենաներն են յեղել

դրուցակիցներս միայն:

Ասա պատուհանը ուշադիր լարած

վորսում եյին տանիքները

ի՞նչ կասեմ իրանց:

Իսկ հետո—

գիշերվա

և միմյանց մասին

չաղակրատում իրարու,

չարժելով Փլյուզեր—լեզուն:

— Յերբ չափահաս եյի—

Մեծերին՝ դործեր չատ:

Փողը դրած գրպանները:

Սիրե՞լ:

Ննդբեմ:

Մի հարյուր ուրբու:

Իսկ յես,
անտուն,
ձեռքերըս—
պատուած դրպանքս դրած
աչեղ թափառում:
Գիշեր:
Հագնում եք զգետ,— ընտիր:
Հոգով հանգատանամ կանանցով, այրիններով:
Իսկ ինձ
Մոսկովան եր գրկի մեջ խեղդում
իր անծայր Սաղովյան ողակներով:
Սրտերում
վոնց ժամացույց
սիրուհիներն են բաղխում:
Սիրո մահճի խաղակիցները
մեջն են զմայլանքի,
Իսկ յես
Մայրաքաղաքի սրտի տրուխտունն եյի բռնում,
պառկած—
նման Ստրասնոյ հրապարակին:
Սըրտաբաց եմ—
Սիրոս համարյա դրսում ե
բացում եմ ինձ և արևին, և ջրափոսերին:
Մտեք ձեր կրքերովը:
Սերերով թափանցեք ներս:
Այսօրվանից
յես սիրոս զեկավարել՝ անկարող եմ:
գիտեմ յես տեղը ուրիշներին սրտի տան:
Յուրաքանչյուրին հայտնի յե՝ նա կրծքավանդակումն ե:
Բայց ինձ վրա
գթվել ե անատոմիան:
Համատարած սիրտ ե—
դողանջում ե ամեն տեղ ուժեղ:
Ո, վորքան են նրանք,
միայն դարունները

այս 20 տարիներին
բորբոքված ներս խուժել:
Ուղղակի անտանելի յե նրանց բեռը չծախսված:
Անտանելի յե վոչ թե այնպես—
բանաստեղծության համար,
այլ բառացի ասված:

— Ի՞նչ դուրս յեկավ—

Ավելին, քան կարելի յե,
ավելին՝ քան հարկավոր ե,—
Կարծես կախված յերազում՝
չառանցանքով պոետական,—
սրտային փոքրիկ զնդիկը աճեց՝
լեռնակույտի հզոր.
լեռնակույտի՝
սիրո
ատելության:
Քայլում են
բեռան տակ
վոտքերս յերերուն,
— Վոր յես
ամուր եմ կաղմվածքով,—
Դու գիտես,
բայց ելի՝
ոտիպված եմ սրտային հավելումով քայլելու,
խոնարհած ուսերիս յեռարչինը թեք:
Ուռչում ե սիրոս վոտանավորային կաթից,
բայց չի թափի,—
ո՞ւր թափի:
Կըլցվի նորից:
Յես հոգնել եմ
լիրիկայից,—
վոր սնուցանում ե աշխարհը,
վոր հիպերբոլն ե
Մոսկովայան նախատիպի:

— Կանչում եմ—

Բարձրացրի հսկայի պես,
լարախաղացի պես տարա,—
ինչպես կանչում են միտինդի ընտրողներին,
ինչպես գլուղումն են
ահադանդում
հրդեհի՛ ժամին,—
յես կանչում եյի,
«Ահա և նա,
ահա,
վերցրե՛ք»:
Յե՛վ յերբ
նման վիթխարին հառաչել ե,—
չընայելով,—
փոշի,
ձնակույտ,
ցեխ,—
կանայք
ինձանից
հրթիռի պես փախել են.
«Մեզ ավելի քիչ ե պետք,
այ, ինչպես տանդո գուցե»...
Տանել — չեմ կարող—
կրում եմ սեփական իմ բեռը:
Ուզում եմ դեն դրել նրան—
և դիտեմ,
չեմ դցի:
Անջատմանը չեն դիմանա կողաչարերս:
Կրճալմանդակս ե ճարճատում պրկումից:

— Դ յ ա —

Յեկար դու—
դործունյա,
յեկար մոռենչիս համար,

հասակիս,
նայեցիր դու,
տնտեսցիր ինձ — հասարակ մի տղա:
Վերցրիր,
ընտրեցիր սիրտս
և ուղղակի
դնացիր խաղալու,—
ինչպես մի աղջիկ՝ դնդակի հետ խաղա:
Յե՛վ հրաչք ե թվում
ամեն մեկին,—
այստեղ՝ դարձանում ե որիորդը,
այնտեղ՝ տրկինն:
«Սիրել այսպիսին»:
Սա հարձակվող ե,
հարկավոր ե սրա համար
դադանոցի սանձահարող մի կին»:
Իսկ յես հրճվում եմ:
Չըկա նա—
ձնչումը:
Առել ե հրճվանքն ինձ
առել եմ յես թե,
ցատկում եմ
ինչպես հնդիկն հարսանիքումը,
այնպես ուրախ եմ յես,
այնպես թեթե:

— Անհնարին ե—

Մենակ չեմ կարող—
դաշնամուրը չեմ տանի
(նամանավանդ յեթե՝
չըհրկիզվող պահարան):
Յեթե դաշնամուր չե,
կամ պահարան չե,
կարո՞ղ եմ տանել յես սիրտն իմ յետ առած:
Դիտի փողատերը.

«Հարուստ եմ անծայր յես :
Չի քավի գրպանը—
կղնեմ հրկիզվող դանձարանը յես» :
Սերս

դեպի քեզ,
պահել եմ
ինչպես դանձը—յերկաթում :
Հանց Կրեսոս
քայլում եմ,
և հրճվում :
Յեվ միթե՞
չեմ առնի
այնտեղից— յերբ
ցանկամ յես,
կառնեմ ժպիտ մի,
կամ կեսը,
ավելի մանր անգամ յես,
յեվ քեֆին՝ ուրիշների հետ
յերբ դիչերը դառնա կես,
կծախսեմ մի տասնհինգ ուրբի
մանրուք լիրիկական :

— Այդպես ել ինձ հետ—

Նավերը— նրանք ել են դալիս նավահանգիստ :
Գնացքը— նա ել ե կայարան քչվում :
Իսկ ինձ դեպի քեզ՝ ձգում ե վաղուցվանից,
Չե՞ վոր յես քեզ սիրում եմ :
Ամեն ոք
Պուշկինյան ասպետը ժլատ
իջնում ե,
քրքրում նկուղն իր, քրքրում— հրճվում ե :
Այդպես ել
քեզ մոտ եմ
սիրելիս վերադառնում :
Իմն ե չե՞ սիրտն այս,

իմովն եմ հրճվում :
Բերկրանքով մենք տուն ենք
յերբ վերադառնում,—
լվացվում, սափրվում ենք,
կեղտը քերելով :
Այդպես ել
քեզ մոտ եմ վերադառնում,
բայց քեզ մոտ դալով յես,
չե՞մ գնում միթին տուն :
Յերկրայինին յերկերն ե իր գիրկն ընդունում :
Վերջնականապես ենք մենք վերադառնում :
Այդպես ել
քեզ մոտ եմ ձգվում սիրելիս,
հազիվ բաժանվում ենք,
հեռանում հազիվ :

— Յեզրակացութուն—

Սերը չեն ջնջի
վոչ գթությունը,
վոչ վերստերը :
Մըտածված ե,
ճշտված ե,
ստուգված :
Յես բարձրացնում եմ հանդիսավոր—
այս տողերը,
յերգվում եմ
սիրելի
հավատարիմ և անդարձ :

Նվիրում եմ ոռոսական կոմունիստական
կուսակցությանը

ՎԼԱԴԻՄԵՐ ԻԼՅԻՆ ԼԵՆԻՆ

Ժամանակն է,
ըսկսում եմ
պատմությո՛ւնը՝
Լե՛նինի մասին:
Բայց վո՛չ նըրա համար,
վոր չունեմ ալիւքս
վիշտ, —
Ժամանակն է
նըբա՛ համար,
վոր թախիծըս սուր
դարձել է ցավ
և պարզ և դիտակցուն:
Ժամանակ,
կըրկին
լողունդները լենինյան
փոթորկի՛ւր:
Այդ մե՞նք պիտի փռենք
լըճերը
արցունքի:
Լե՛նինը
և ա՛յժըմ
ամենի՛ց ավելի
կենդանի՛ յե դեռ:
Նա մեր ո՛ւժը,
դիտությո՛ւնը,
դե՛նքն է մեր:

Նավակնե՛ր են մարդիկ:
Թեև՝ ցամաքո՛ւմ:
Մեր կյանքում՝
մի՛նչև
կյանքդ ավարտես՝
չատ ու չատ
կեղտոտ խեցիներ են
հավաքվում,
կպչում են
կողերի՛դ —
կըպչում են քե՛դ:
Իսկ հետո՝
ճեղքելով
հողմե՛րը կատաղի —
Նըստում ես
ափին
և արևին մո՛տ
ու մաքրում ես
մի՛րուքը
կանաչ լոռերի
և մոռերանդ
լորձունքը
ծովամոր:
Յե՛ս
մաքրո՛ւմ եմ ինձ
Լե՛նինի համաձայն,
վորպե՛սդի
հեղափոխությա՛ն մեջ
լողամ հեռուն:
Յես վախենո՛ւմ եմ
տողերից այս հաղար՝
ինչպես մանո՛ւկ ժամանակ
սըտի՛ց ես վախենում:
Կըչողացնեն

սլըսակը՝
 վորպես գըլուխ.
 յես անհանդիստ եմ,
 վոր չըծածկվի
 իսկական,
 իմաստուն
 և մարդկային
 Լենինյան
 ճակատը վիթխարի:
 Յես վախենում եմ,
 վոր
 յերթեր-մալգուլեյները,
 յերկրպագումները
 կանոնն ընդունված
 չըծածկելի՛ն
 քաղցմեղձ մի ոծումով
 պարզությո՛ւնն այն—
 Լենինյան:
 Նըրա՛ համար
 դողո՛ւմ եմ՝
 վոնց աչքիս լույսի.
 վոր
 կանֆետայի՛ն գեղեցկությամբ
 նա՛ չըկեղծվի:
 Քվեարկո՛ւմ ե սիրտըս—
 գրե՛լ յես պարտավոր եմ—
 ըստ մանդատին պարտքի:

Վողջ Մոսկվա՛ն:
 Յերկիրը սառցակա՛լ
 դողում ե դուխոնով:
 Խարույկների կողքին—
 ցրտատարները՝
 դեռնա՛ս դիչերո՛վ:
 Ի՞նչ ե արել նա:
 -

Ո՞վ ե նա,
 և վորտեղի՞ց:
 Ինչո՞ւ համար
 նըրան
 պատիվն այդ մեծ:
 Խոսքը խոսքի՛ հետքից,
 մըտքի՛ցս քաշելով՝
 չե՛մ ասի
 մեկի՛ն իսկ—
 տե՛ղիդ նըստիր,
 վո՛չ:
 Աղքատ ե
 աշխարհի
 խոսքի արհեստանոցն:
 Վո՞րտեղից
 առնե՛մ յես
 խոսքերն արտահայտիչ:
 Մեր որերն են—
 յո՛թ,
 մեր ժամերն են—
 տասերկո՛ւ:
 Ձե՛ս ապրի
 ավելին
 դուռով:
 Մա՛հը
 չըգիտե՛ խնդրել ներողություն:
 Իսկ յեթե՛—
 ժամանակն ե վատ դործո՛ւմ,
 փո՛քր ե
 չափը որացույցային ու թույլ՝
 այդ դեպքում՝
 մենք
 «ե՛րա» ենք ասում,
 ասում ենք մենք—
 «եպո՛խա», դարադե՛լս:
 -

Մենք
 քընուժում ենք
 գեղերը:
 Յերեկը՝
 գործում ենք արարքներ:
 Սիրում ենք
 մեր ծանոթ ջրերը
 մեր սանդուխտ
 ծեծել:
 Իսկ յեթե
 բոլորի՛ տեղ
 կըվարե
 մեկը
 յերևույթների՝ հեղե՛ղն անկանդ—
 ասում ենք—
 «մարդարե՛»,
 ասում ենք—
 «հանճա՛ր»:
 Մենք
 պահանջներ չունեն՝ք:
 Չըկանչեն՝
 չենք ե՛լ խըցկվի մեջտեղ.
 դո՛ւր ենք դալիս մենք
 կընո՛ջը մեր
 և դա՛
 ասիլի՛ քան զոհացնո՛ւմ ե մեզ:
 Իսկ յեթե՛
 մարմնով ու հոգով ամրապինդ
 քըչո՛ւմ ե մեզ վըրա
 մեզ չընըման մի՛ անձ՝
 կըպցընո՛ւմ ենք—
 «աստվածայի՛ն մի տեսք»—
 դարմանում ենք—
 «աստծո՛ւց մեզ պարգևված»:
 Ասում ենք աշտպես,—

ու վոչ խելոք
